Կառլոս Ֆուենտես

աուրա

Առաջաբան

Կառլոս Ֆուենտեսի (1928-2012) անունը հայտնի է ոչ միայն իր երկրում՝ Մեքսիկայում և ողջ Լատինական Ամերիկայում, այլև մնացած բոլոր մայրցամաքներում՝ որպես լատինաամերիկյան բումի, մոգական ռեալիզմի մեծ ներկայացուցիչ: Ֆուենտեսը նաև մեծ մտավորական էր և դիվանագետ: Գրական հարուստ ժառանգություն թողած և բազմաթիվ մրցանակների արժանացած այս գրողը հասարակության լայն խավերի և գրաքննադատների կարծիքով արժանի էր Նոբելյան մրցանակի: Երբ 2010թ. Նոբելյան մրցանակը շնորհվում է լատինաամերիկյան բումի մեկ այլ հրաշալի գրողի՝ Մարիո Վարգաս Լյոսային, վերջինս հայտնում է, որ իր մեծագույն ցանկությունն է, որ հաջորդ մրցանակակիրը Կառլոս Ֆուենտեսը լինի, որին կարճ ժամանակ անց

Ֆուենտեսը պատասխանում է. «Երբ մրցանակը տվեցին Գարսիա Մարկեսին (1982), ինձ էլ տվեցին, իմ սերնդին, լատինաամերիկյան վեպին, որը մենք ներկայացրինք տվյալ պահին: Այնպես որ, ես ինձ մրցանակը ստացած եմ համարում»:

«Աուրա» վիպակը գրվել է 1961 թվականին և լույս տեսել 1962-ին՝ նույն տարում, երբ լույս է տեսել գրողի մյուս ամենահայտնի վեպը՝ «Արտեմիո Կրուսի մահը», և չնայած իր փոքր ծավալին՝ «Աուրան» «Արտեմիո Կրուսի մահը» վեպի հետ միասին համարվում է Ֆուենտեսի ստեղծագործության և առհասարակ լատինաամերիկյան բումի առանցքային գործերից:

Վիպակը պատմում է երիտասարդ, կիրթ, մասնագիտությամբ պատմաբան, ցածր աշխատավարձով որպես ուսուցիչ աշխատող Ֆելիպե Մոնտերոյի մասին, ով պատահաբար մի հայտարարություն է կարդում թերթում, որով բարձր կրթական ունակություններ ունեցող

մասնագետ է պահանջվում լավ վարձատրվող աշխատանքի համար և պահանջվում է նաև անձամբ ներկայանալ: Ֆելիպեն ներկայանում է նշված հասցեով, որը գտնվում է քաղաքի հին թաղամասում, որտեղ հինն ու նորը խառնված են իրար, հին ու նոր շենքերը միաժամանակ համարակալված են հին ու նոր համարներով: Ֆելիպեն հայտնվում է այրի պառավ Կոնսուելոյի՝ մթի մեջ թաղված տարօրինակ տանը, որտեղ գրեթե ոչինչ չի երևում, միայն պառավի ձայնն է լսվում: Նրանից պահանջվում է կարգի բերել և վերաշարադրել Կոնսուելոյի ամուսնու՝ Մեքսիկայում կռված ֆրանսիացի գնդապետի հուշերը, սակայն պառավը մի պայման ունի՝ աշխատանքի ընթացքում Ֆելիպեն այդ տանը պետք է ապրի: Չնայած բարձր աշխատավարձին՝ նա վարանում է, բայց մնալու որոշում է ընդունում, երբ տեսնում է գեղեցկուհի Աուրային՝ պառավի քրոջ դստերը, որ նրա հետ է ապրում: Եվ այդ պահից էլ ահա տարօրինակ բաներ են սկսում կատարվել հին, մութ

ու խարխուլ տանը: Իրար խառնված իրականության և անուրջների մեջ Ֆելիպեն սիրահարվում է Աուրային և ցանկանում է նրան իր հետ տանել այդ տնից, քանզի համոզված է, որ պառավը մեծ իշխանություն ունի Աուրայի վրա, ճնշում է նրան, թույլ չի տալիս իր կյանքով ապրել, սակայն մյուս կողմից տարօրինակորեն աղջկա շարժումները, պահվածքը շատ նման են պառավին, և աղջիկը շատ նվիրված է նրան: Քնած և արթմնի երազների մեջ Ֆելիպեն կորցնում է իրականության զգացողությունը, չի հասկանում՝ կատարվածն իրա՞կա՞ն է արդյոք, թե՞ իր տեսախաբությունների արդյունքն է, երիտասարդ Աուրան և պառավ Կոնսուելոն նույն մա՞րդն են արդյոք:

Ֆուենտեսի կիրառած բազմաթիվ նորարարական մեթոդները նպաստում են իրականի և անիրականի, երազի և կյանքի, անցյալի, ներկայի և ապագայի այդ խառնաշփոթին: Պատմությունը պատմվում է եզակի երկրորդ դեմքով.

Զուր թակում ես դուռը պղնձե մաշված, հարթված, շան գլխի ձև ունեցող թակով, որ բնական գիտությունների թանգարաններում ցուցադրվող շան սաղմի գլուխ է հիշեցնում: Թեզ թվում է, թե շունը ծիծաղում է վրադ, և բաց ես թողնում պաղ թակը:

Պատմողն ասես ամեն բան գիտի նախապես և պատմությունը հաճախ պատմում է ապառնի ժամանակով, բայց և ներկայի համադրությամբ.

Գեղնին հառած հայացքդ կբարձրացնես, իսկ նա արդեն փակած կլինի բերանը, բայց «նա կվերադառնա» բառերը նորից կլսես, կարծես պառավը հենց այդ պահին արտաբերի դրանք: Սակայն նրա շուրթերն անշարժ են: Դու հեգ ես նայում, քեզ կուրացնում է նրա սրբանի իրերից առկայծող վեգվեգուն լուսապսակի ցոլքը:

Պատմելու նորարարական այս և այլ մեթոդներով, բազմաթիվ խորհրդանշական պատկերներով (ճագար, կատուներ, կանաչ գույն,

խաչելություն և այլն), ինի ու նորի միաձուլված միջավայրով Կառլոս Ֆուենտեսին հաջողվել է ստեղծել մի պատմություն, որ հատում է իրականի և անիրականի, շոշափելիի և անշոշափելիի, երազի և կյանքի, հողեղեն մարդկանց և ուրվականների սահմանագիծը, ստեղծել սիրո պատմություններ, որոնց ժամանակը կանգ է առել երիտասարդության և ծերության, գեղեցկության և տգեղության, ենթադրյալ անցյալի և ապագայի միջև, մի պատմություն, որ հավերժ երիտասարդ ու գեղեցիկ մնալու անիրագործելի ցանկության մասին է:

Վիպակում կան որոշ էրոտիկ դրվագներ, որոնց պատճառով 2001 թվականին՝ լույս տեսնելուց 39 տարի անց, վիպակը գրաքննության թիրախ է դառնում, երբ Մեքսիկայի Աշխատանքի նախարարության քարտուղար Կառլոս Աբասկալը բողոք է ներկայացնում իր դստեր դպրոցին այն բանի համար, որ իսպաներենի ուսուցչուհին աշակերտուհիներին առաջարկել է կարդալ վիպակը: Ուսուցչուհուն

հեռացնում են աշխատանքից: Դեպքը մեծ վիճաբանության առիթ է դառնում մի կողմից՝ Ֆուենտեսի պաշտպան գրողներ Կառլոս Մոնսիվայսի և Էլենա Պոնյատովսկայայի, մյուս կողմից՝ Աբասկալի պաշտպաններ կառավարության բարձրաստիճան պաշտոնյաների և հոգևորականների միջև: Սակայն վերջին հաշվով պահպանողական գրաքննությունը միշտ էլ հակառակ էֆեկտն է ունենում, թաքցնելու փոխարեն է՛լ ավելի բացահայտ և նշանակալի է դարձնում գրաքննվող գործը: Կառլոս Ֆուենտեսն ինքը 2008թ. Գվադալախարայի Գրքի միջազգային ցուցահանդեսում այդ առիթով ասել է.

«Երբ որևէ գիրք գրաքննության թիրախ է դառնում, կարծես վերածնվում է գիրքը: «Աուրան» ահա այդպիսի թիրախ է դարձել, որի համար երախտապարտ եմ, որովհետև այդ գրաքննության շնորհիվ գրքի վաճառքը բազմապատկվել է... Վաճառքը կտրուկ հասել է շաբաթական 20000 օրինակի:

Պատկերացնո՞ւմ եք, մի բան, որ երջանկացրել է ինձ և իմ հրատարակչին»:

Սակայն անկախ այս պատմությունից՝ «Ուրան» իրավամբ համարվել և համարվում է լատինաամերիկյան բումի և համաշխարհային գրականության ամենանշանակալի և ամենաշատ ընթերցվող գործերից մեկը, և մենք ուրախ ենք, որ «Արտեմիո Կրուսի մահը» վեպի հայերեն թարգմանությունից հետո տարիներ անց վերջապես հայ ընթերցողին ենք ներկայացնում Կառլոս Ֆուենտեսի մյուս նշանավոր ստեղծագործությունը:

Կառա Չոբանյան

Մանոլո և Տերե Բարբաչանոներին

Տղամարդը որս է անում և պատերազմում: Կինը խարդավանքներ է հյուսում և երազում, նա է մայրը երևակայության, աստվածների: Նա երկրորդ տեսողություն ունի՝ թևեր, որոնք թույլ են տալիս ճախրել դեպի ցանկության և երևակայության անծայրածիր հորիզոնները... Աստվածները նման են տղամարդկանց. ծնվում և մեռնում են կնոջ կրծքի վրա...

Ժյուլ Միշլե[1]

[1] Ժյուլ Միշլե (1798-1874) – ֆրանսիացի պատմաբան, «Ֆրանսիայի պատմություն» (մինչև 1789թ.) բազմահատոր և «Ֆրանսիական հեղափոխության պատմություն» աշխատությունների հեղինակ *(այստեղ և այսուհետ ծանոթությունները՝ թարգմանչի):*

1

Կարդում ես հայտարարությունը. այդ կարգի առաջարկ ամեն օր չի, որ արվում է: Նորից ու նորից ես կարդում ազդը: Կարծես հենց քեզ ուղղված լինի, ուրիշ ոչ ոքի: Մտացրիվ՝ չես նկատում, և սիգարի մոխիրն ընկնում է թեյի գավաթի մեջ, որով այս կեղտոտ, էժանագին սրճարանում թեյ ես խմում: Նորից ես կարդում: Պահանջվում է երիտասարդ պատմաբան: Կարգապահ: Բարեխիղճ: Ֆրանսերենի իմացությամբ: Գերազանց իմացությամբ, նաև խոսակցականի: Ունակ քարտուղարի աշխատանք կատարելու: Ուրեմն՝ երիտասարդ, ֆրանսերենի իմացությամբ, ցանկալի է որոշ ժամանակ Ֆրանսիայում ապրած: Ամսական երեք հազար պեսո, սնունդ և հարմարավետ, արևկող, որպես աշխատանոց հարմարեցրած ննջասենյակ: Միայն անունդ է պակասում:

Քիչ է մնում հայտարարության ընդգծված և աչքի զարնող բառերն ազդարարեն՝ Ֆելիպե Մոնտերո: Պահանջվում է Սորբոնի շրջանավարտ, ավելորդ տեղեկություններով գլուխը լցրած պատմաբան, խունացած թղթեր պեղելու սովոր, մասնավոր դպրոցներում ամսական ինչսուն պեսոյով որպես փոխարինող ուսուցիչ աշխատող Ֆելիպե Մոնտերոն: Սակայն կթե նման բան կարդայիր, խիստ կկասկածնիր, որպես կատակ կընդունեիր: Դոնսելես 815: Ներկայանալ անձամբ: Հեռախոս չկա:

Վերցնում ես պորտֆելդ և թեյադրամ թողնում սեղանին: Մտածում ես, որ նման բնութագիր ունեցող մեկ ուրիշ երիտասարդ պատմաբան արդեն կարդացել է այդ նույն հայտարարությունը, առաջ անցել քեզնից և դրաղեցրել տեղը: Աշխատում ես մոռանալ այդ մասին և դեպի փողոցի անկյունն ես ուղղվում: Սպասում ես ավտոբուսի, սիգարետ ես վառում, մտքիդ մեջ կրկնում տարեթվերը, որոնք պարտավոր ես անգիր իմանալ, որպեսզի այդ շշման

երեխաները հարգեն քեզ: Պետք է նախապատրաստվես: Ավտոբուսը մոտենում է, իսկ դու սև կոշիկներիդ քթերն ես ուսումնասիրում: Պետք է նախապատրաստվես: Ձեռքդ գրպանդ ես տանում, խաղում պղնձադրամների հետ, ի վերջո երեսուն սենտավո ես ջոկում, սեղմում ափիդ մեջ և ձեռքդ երկարում, որպեսզի ամուր բռնես կանգառում երբեք երկար չսպասող ավտոբուսի երկաթաձողից, ներս ցատկես, ճանապարհ բանաս, երեսուն սենտավոն վճարես, մի կերպ հարմարվես իրար գլխի լցված ուղևորների արանքում, աջ ձեռքով կառչես բռնաձողից, պորտֆելդ սեղմես թևիդ տակ և ձախ ձեռքդ մտացրիվ տաբատիդ հետևի գրպանը տանես, որտեղ թղթադրամներդ ես պահում:

Այդ օրը կանցնի մյուս բոլոր օրերիդ նման, և հայտարարությունը մտքիցդ դուրս կգա մինչև հաջորդ օրը, երբ վերստին նստես էժանագին սրճարանի սեղանի մոտ, նախաճաշ պատվիրես և լրագիրը բացես:

Հայտարարությունների էջին հասնելով՝ դարձյալ կտեսնես այդ ընդգծված բառերը՝ երիտասարդ պատմաբան: Ուրեմն երեկ ոչ ոք չի դիմել: Կկարդաս հայտարարությունը: Մի պահ կհապաղես վերջին տողին հասնելով՝ չորս հազար պեսո:

Կզարմանաս այն մտքից, որ առհասարակ ինչ-որ մեկն ապրում է Դոնսելես փողոցում: Քեզ միշտ թվացել է, որ քաղաքի հին կենտրոնում ոչ ոք չի ապրում: Եվ ահա դու քայլում ես անշտապ՝ աշխատելով կենցաղային իրերի և ժամացույցների նորոգման արհեստանոցների, կոշիկի խանութների և զովացուցիչ ըմպելիքների կրպակների վերածված գաղութային հնօրյա պալատների խառնակույտի մեջ 815 համարի շենքը գտնել: Համարակալումը վերանայվել է, նոր համարներ են փակցվել, հինն ու նորն իրար են խառնվել: 13-րդ շենքի կողքին 200-րդն է, հախճասալիկներով նրեսպատված հին շենքի «47» համարի տակ կավճով արված նոր գրառումը հուշում է՝

այժմ 924: Հայացքդ կբարձրացնես երկրորդ հարկերի վրա. այնտեղ ոչինչ չի փոխվել: Ոչ երաժշտական սարքեր են խզում լռությունը, ոչ սնդիկե լամպեր են շողշողում, ոչ էլ ցուցադրական զիզի-բիզի իրեր են զարդարում շենքերի այդ երկրորդ երեսը: Հրաբխային քարից շարված պատեր, աղավնիներով պսակված սրբերի եղծված արձաններով զարդարված խորշեր, մեքսիկական բարոկկոյի ոճի զարդաքանդակներ, ճաղապատ պատշգամբներ, թիթեղյա ծխնելույզներ ու ջրհորդաններ, ավազաքարե գարգոլներ[1]: Կանաչավուն երկար վարագույրներով արևից պաշտպանված պատուհաններ, որոնցից մեկից ետ է քաշվում ինչ-որ մեկը, երբ դու հայացքդ պատուհանին ես բարձրացնում: Նայում ես խաղողի քմահաճ որթերով զարդարված

[1] Գարգոլա – գոթական եկեղեցաշինությանը բնորոշ գրոտեսկային երևակայական արարածների քարե արձաններ ջրհորդանների ելուստներին, որոնք նաև ջուրը տանիքից հեռացնելու դեր են կատարում:

ճակատամուտքին, ապա հայացքդ իջեցնում ես անշուք նախամուտքին և հայտնաբերում՝ 815, նախկին՝ 69:

Զուր թակում ես դուռը պղնձե մաշված, հարթված, շան գլխի ձև ունեցող թակով, որ բնական գիտությունների թանգարաններում ցուցադրվող շան սաղմի գլուխ է հիշեցնում: Քեզ թվում է, թե շունը ծիծաղում է վրադ, և բաց ես թողնում պաղ թակը: Մատներով հրում ես թեթևակի, դուռը ետ է քաշվում, և ներս մտնելուց առաջ մի վերջին անգամ հայացք ես նետում ուսիդ վրայից, հոնքերդ ես կիտում՝ գրեթե չշարժվող ավտոբուսների ու մեքենա-ների երկար շարանը տեսնելով, որ հռնդում է, շռնդում, իր անհամբերության վնասաբեր ծուխն արտանետում: Ապարդյուն փորձում ես գեթ մի պատկեր մտապահել այդ անտարորո-շելի արտաքին աշխարհից:

Ետևիցդ փակում ես նախամուտքի դուռը և փորձում ծածկավոր անցուղին մտնել՝ այն խավար ներքնաբակը, որտեղից մամուռի,

խոնավ բույսերի, մգլած արմատների թանձր ու արբեցնող բույր է հասնում հոտոտելիքիդ: Ապարդյուն լույս ես որոնում, որ ճամփա ցույց տա քեզ: Պիջակիդ գրպանում լուցկու տուփ ես փնտրում, սակայն ականջ ծակող, խզված մի ձայն հեռվից զգուշացնում է քեզ.

– Ոչ... կարիք չկա: Խնդրում եմ: Տասներեք քայլ առաջ եկեք և աջ կողմում աստիճաններ կգտնեք: Վերև բարձրացեք, խնդրում եմ: Աստիճանները քսաներկուսն են: Կհաշվեք: Ահա այդտեղ:

Տասներեք: Աջ: Քսաներկու:

Խոնավության, մգլած բույսերի հոտը կպարուրի քեզ, մինչ քայլերդ կհաշվես՝ սկզբում քարե սալիկների, ապա փակված մնալուց ու խոնավությունից կակղած, ճռռացող փայտե աստիճանների վրա: Ցածրաձայն հաշվում ես մինչև քսաներկուսը և կանգ առնում՝ լուցկու տուփը ձեռքիդ, պորտֆելը թևիդ տակ: Ձեռքդ տանում ես հին ու խոնավ սոճու հոտ արձակող դռանը, բռնակ ես փնտրում, չգտնելով ի

վերջո հրում ես այն և այժմ էլ ոտքերիդ տակ կարպետ ես զգում: Ծռմռված, բարակ մի կարպետ, որի վրա գայթում ես և հանկարծ նկատում, որ ինչ-որ տեղից գորշավուն լույս է թափանցում, և որոշ ուրվագծեր տեսանելի են դառնում:

– Սենյորա,– ասում ես միապաղաղ ձայնով, թանի որ կարծում ես, որ լսածդ կնոջ ձայն էր,– սենյորա...

– Իսկ հիմա՝ ձախ: Առաջին դուռը: Բարի եղեք:

Հրում ես այդ դուռը,– արդեն չես էլ սպասում, որ որևէ դուռ կարող է փակված լինել, արդեն գիտես, որ բոլորն էլ հրելով են բացվում,– և լույսի ցրված շողերը միահյուսվում են քո արտևանունքների վրա, ասես մետաքսե նուրբ ոստայնի միջով ես անցնում: Սկզբում միայն պատերն ես տեսնում, որոնց վրա տասնյակ լույսերի թրթռոցն անհավասար ցոլքեր է գցում: Ի վերջո քեզ հաջողվում է զատորոշել, որ դրանք անհամաչափ

դասավորված դրոցների և դարակների վրա շարված մոմեր են: Նաև ինչ-որ արծաթե սրտիկներ, սրվակներ, շրջանակված ապակիներ են թեթևակի լույս արձակում, և միայն այդ թրթռացող ցոլքերի ետևում՝ սենյակի խորքում, կտեսնես մահճակալը և նշան անող մի ձեռք, որ հույլ շարժումներով կարծես կանչում է քեզ:

Քեզ հաջողվում է տեսնել այդ ձեռքը, երբ թիկունքդ դարձնում ես պաշտամունքային լույսերի երկնակամարին: Բախվում ես մահճակալի ոտքին. պետք է շրջանցես այն, որպեսզի սնարին մոտենաս: Իսկ այնտեղ փոքրիկ մարմինը գրեթե չի նկատվում հսկայական մահճակալի մեջ: Երբ մեկնում ես ձեռքդ, ոչ թե նրա ձեռքին ես դիպչում, այլ թավ ու նուրբ մորթու՝ ինչ-որ արարածի ականջներին, որ անձայն ինչ-որ բան է կրծում համառորեն և քեզ նայում իր կարմիր աչքերով: Ժպտում ես ու շոյում ճագարին, որ նստած է ձեռքի կողքին, որը վերջապես իր պաղ մատներով

մոտենում է քո ձեռքին, երկար ժամանակ մնում խոնավ ափիդ վրա, շրջում է այն և բացված մատներդ մոտեցնում ժանեկավոր բարձին, որը դու սկսում ես շոշափել, որպեսզի ազատես ձեռքդ:

– Ֆելիպե Մոնտերո: Ես ձեր հայտարարությունն եմ կարդացել:

– Այո, արդեն հասկացա: Ներեցեք, այստեղ նստելու տեղ չկա:

– Ոչինչ: Մի անհանգստացեք:

– Շատ բարի: Կողքի թեքվեք, խնդրում եմ: Լավ չեմ տեսնում ձեզ: Թող լույս ընկնի ձեզ վրա: Ահա այդպես: Պարզ է:

– Ես ձեր հայտարարությունը կարդացի...

– Այո, իհարկե: Կարդացիք: Եվ գտնում եք, որ համապատասխա՞ն եք: Avez vous fait des études?[1]

– A Paris, madame.[2]

---

[1] Կրթություն ստացե՞լ եք *(ֆր.)*:

[2] Փարիզում, մադամ *(ֆր.)*:

– Ah, oui, ça me fait plaisir, toujours, toujours, d'entendre. .. oui. .. vous savez... on etait tellement habitué. . . et après...[1]

Դու մի կողմ կքաշվես, որպեսզի արծաթի, մոմի և ապակու մեկտեղված լույսն ուրվագծի մետաքսե գլխանոցը, որը ծածկում է ճերմակ մազերը և շրջանակում դեմքը, որ շատ ծեր լինելուց գրեթե մանկական է թվում: Գլխանոցի տակ թաքնված ականջներին հասնող պինդ կոճկած ճերմակ օձիքը, սավաններն ու վերմակները ծածկում են ամբողջ մարմինը, բացի բրդե շալի մեջ փաթաթված թևերից և փորի վրա հանգչող դալուկ ձեռքերից: Միայն դեմքին կարող ես նայել, մինչև որ ճագարի մի շարժումը հնարավորություն տա քեզ հայացքդ թեքել և մաշված ու փայլը կորցրած ալ մետաքսե վերմակների վրա թափթփված հացի կողրերին ու փշրանքներին նայել գողունի:

---

[1] Օ՜, այո, ինձ համար միշտ, միշտ հաճելի է լսել... այո... գիտե՞ք... մենք այնպես էինք վարժվել դրան... իսկ հետո... *(ֆր.)*:

– Մեր գործին դառնանք: Ինձ շատ չի մնացել ապրելու, սենյոր Մոնտերո, այդ պատճառով էլ որոշեցի խախտել սկզբունքներս և այդ հայտարարությունը տալ թերթում:

– Այո, հենց դրա համար էլ ես այստեղ եմ:

– Այո, այստեղ եք: Այսինքն՝ համաձայն եք:

– Բայց ես որոշ բաներ կցանկանայի պարզել...

– Դե, բնական է: Ուրեմն հետաքրքրասեր եք:

Նա կնկատի, որ հայացքդ սահում է կողասեղանին դրված գույնզգույն սրվակների, բաժակների, ալյումինե գդալների, դեղահաբերի ու պատիճների շարան-շարան դեղամանների, նաև սպիտակավուն հեղուկի հետքերով երկու ուրիշ բաժակների վրայով, որոնք հատակին են դրված՝ ցածրիկ մահճակալին պառկած կնոջ ձեռքի համար հասանելի տեղում: Եվ միայն այն պահին, երբ ճագարը ցատկի անկողնու վրայից և մթության մեջ կորչի, դու գլխի կընկնես, որ մահճակալը գրեթե կպած է գետնին:

– Ես ձեզ չորս հազար պեսո եմ առաջարկում:

– Այո, այդպես է ասված այսօրվա հայտարարության մեջ:

– Ախ, ուրեմն արդեն տպվե՞լ է:

– Այո, տպվել է:

– Խոսքը ամուսնուս՝ գեներալ Լյորենտեի նոթերի մասին է: Մինչև մեռնելս դրանք պետք է կարգի բերվեն: Անպայման պետք է հրապարակվեն: Վերջերս եմ նման որոշում կայացրել:

– Իսկ գեներալն ինքը, ի՞նչ է, ի վիճակի չէ՞...

– Նա վաթսուն տարի առաջ է մահացել, սենյոր: Դրանք նրա անավարտ հուշերն են: Եվ պետք է լրացվեն: Անպայման մինչև իմ մեռնելը:

– Բայց...

– Ես ձեզ ամեն ինչ կպատմեմ: Դուք կսովորեք ամուսնուս ոճով շարադրել: Բավական է կարգի բերեք և կարդաք այդ նոթերը, որպեսզի զգաք, թե որքան հմայված եք այդ

շարադրանքով, այդ թափանցիկ ոճով, այդ, այդ...

– Այո, այո, հասկանում եմ:

– Սա՛գա: Սա՛գա: Ո՞ւր է: Ici, Saga[1]...

– Սագան ո՞վ է:

– Իմ ընկերակիցը:

– Ճագա՞ը:

– Այո: Նա կվերադառնա:

Գետնին հառած հայացքդ կբարձրացնես, իսկ նա արդեն փակած կլինի բերանը, բայց «նա կվերադառնա» բառերը նորից կլսես, կարծես պառավը հենց այդ պահին արտաբերի դրանք: Սակայն նրա շուրթերն անշարժ են: Դու հետ ես նայում, քեզ կուրացնում է նրա սրբարանի իրերից առկայծող վետվետուն լուսապսակի ցոլքը: Երբ նորից ես նայում կնոջը, տեսնում ես, որ աչքերը շատ լայն են բացված, և այդ աչքերը խաժ են, ջրակալած, խոշոր, գույնով գրեթե չեն տարբերվում իրենց բոլորող

[1] Այստեղ արի, Սագա... *(ֆր.)*:

դեղնավուն խնձորակից, և միայն բիբերի սև կետիկներն են խախտում այդ խաժությունը, որ քիչ առաջ կորած էր կախ ընկած կոպերի թավ ծալքերի տակ՝ ասես պաշտպանելով այդ հայացքը, որ հիմա նորից է թաքնվում (ներս է քաշվում,– մտածում ես դու) իր անջուր անձավի խորքում:

– Ուրեմն մնում եք: Ձեր սենյակը վերևում է: Այնտեղ, ինչ խոսք, լուսավոր է:

– Սենյորա, թերևս ավելի լավ կլինի ձեզ նեղություն չպատճառեմ: Ես կարող եմ իմ տանը մնալ և ինձ մոտ աչքի անցկացնել նոթերը...

– Այդպիսին է իմ պայմանը, այստեղ պետք է մնաք: Մենք շատ ժամանակ չունենք:

– Չգիտեմ, ախր...

– Առ՛ւրա...

Նրա ննջարան մտնելու պահից ի վեր առաջին անգամ սենյորան կշարժվի, և երբ նորից ձեռքն առաջ մեկնի, դու քո կողքին անհանգիստ շնչառություն կզգաս, և քո ու կնոջ միջև մեկ այլ ձեռք կձգվի և պառավի մատներին

կհպվի: Հայացքդ շրջում ես և տեսնում երի-տասարդ աղջկան, սակայն ոչ հասակով մեկ, որովհետև նա շատ մոտ է քեզ, և հայտնվելն էլ անսպասելի էր, անաղմուկ (թեև նույնիսկ ձայները, որոնք չեն լսվում, որոնք սակայն իրական են, մտապահվում են իսկույն, քանզի ամեն դեպքում ավելի բարձր են, քան նրանց ուղեկցող լռությունը):

– Ասացի, չէ՞, որ կվերադառնա:

– Ո՞վ:

– Աուրան: Իմ ընկերակիցը: Քրոջս աղջիկը:

– Բարի օր:

Օրիորդը գլուխը կխոնարհի, և պառավը նույն պահին կկրկնի նրա շարժումը:

– Սա սենյոր Մոնտերոն է: Մեզ հետ է ապրե-լու:

Մի քանի քայլ այն կողմ կգնաս, որպեսզի մոմերի լույսն աչքերիդ չընկնի: Աղջկա աչքերը փակ են, ձեռքերը՝ ազդրին խաչած. նա քեզ չի նայում: Ապա դանդաղ բացում է աչքերը, ասես ննջարանի ցոլքերից է վախենում: Վերջապես

կարող ես տեսնել այդ ծով աչքերը, որոնք ծփում են, փրփրում, հանդարտվում, կանաչում և կրկին բորբոքվում ալիքների նման: Դու նայում ես այդ աչքերին և մտքիդ մեջ կրկնում, որ ամենևին էլ այդպես չէ, որ դրանք սովորական գեղեցիկ կանաչ աչքեր են մյուս բոլոր գեղեցիկ կանաչ աչքերի նման, որ երբևէ տեսել ես կամ դեռ կտեսնես: Սակայն ինքդ քեզ չես կարող խաբել. այդ աչքերը ծփում են, փոփոխվում, ասես ցանկալի մի բնապատկեր են ներկայացնում, որը միայն դու կարող ես տեսնել հեռու-հեռվում:

– Այո: Քեզ հետ եմ ապրելու:

2

Պառավը կժպտա, նույնիսկ կծիծաղի իր ականջ ծակող ձայնով և կասի, որ շատ ուրախ է, որ բարի կամք դրսևորեցիր, և կհավելի, որ օրիորդը ցույց կտա քո սենյակը, այնինչ դու չորս հազար պեսո աշխատավարձի մասին ես

մտածում, աշխատանքի մասին, որ գուցե և հաճելի լինի, քանի որ մանրակրկիտ հետազոտական աշխատանքները, որոնք բացառում են ֆիզիկական ջանքերը, տեղից տեղ տեղափոխվելը, այլ անձանց հետ անխուսափելի ու տաղտկալի հանդիպումները, քո սրտով են: Այս մտքերով տարված՝ հետևում ես աղջկան (զգում ես, որ նրան ոչ թե հայացքով, այլ լսողությամբ ես հետևում. նրա շրջազգեստի շրշյունի, կերպասի խշխշոցի ետևից ես գնում) և տենչում ես նորից նայել նրա աչքերին: Մթության մեջ տակավին չվարժվելով թանձր խավարին՝ բարձրանում ես խշխշոցի ետևից: Հիշում ես, որ մոտավորապես ժամը վեցը պետք է լինի, և շատ ես զարմանում, որ ննջասենյակդ լույսով է ողողված, երբ Աուրան ձեռքով հրում է դուռը,– ևս մի անփականք դուռ,– անմիջապես մի կողմ քաշվում և ասում.

– Ահա ձեր սենյակը: Մի ժամից համեցեք ընթրիքի:

Եվ հեռանում է կերպասը խշխշացնելով, և քեզ այդպես էլ չի հաջողվում մեկ անգամ ևս տեսնել նրա դեմքը:

Փակում ես,– ընդամենը հրում ես,– դուռը քո ետևից և հայացքդ բարձրացնում հսկայական, ամբողջ առաստաղը բռնող լուսամուտին: Քթիդ տակ ժպտում ես, երբ գիտակցում ես, որ մթնշաղի լույսը ծակում է աչքերդ տան մյուս հատվածների կիսախավարից հետո: Փորձում ես ոսկեզօծ մետաղե մահճակալի ներքնակի փափկությունը, գոհ ես մնում և հայացքով շրջում սենյակում. բրդե կարմիր գորգ, ոսկեգոծն ու ճիթագույն պաստառներ, թավշե կարմիր բազկաթոռ, կանաչ կաշվով եզերված ընկուզափայտե հին աշխատասեղան, հնօրյա կերոսինե լամպ՝ աղոտ լույս մութն ընկնելուց հետո աշխատելու համար, սեղանի վերևում ամրացված գրադարակ՝ ձեռքի համար հասանելի, կոշտակազմ գրքերով բեռնված: Դեպի մյուս դուռն ես գնում և հրելով այն՝ հնաձաշակ մի լոգասենյակ ես հայտնաբերում՝

ծաղկանախշ հախճապակուց քառոտանի լոգարան, կապույտ լվացարան, անհարմար զուգարանակոնք: Լոգասենյակում տեղադրված ընկուզափայտե զգեստապահարանի օվալաձև մեծ հայելու մեջ երկար նայում ես քեզ: Շարժում ես թավ հոնքերդ, իրար ես հավաքում լայն ու հաստ շուրթերդ, որից գոլորշիով է պատվում հայելին: Փակում ես սև աչքերդ, իսկ երբ բաց ես անում, գոլորշին անհետացած է լինում: Դադարում ես շունչդ պահել և ձեռքդ սահեցնում ես սևաթույր ու հարթ վարսերիդ վրայով, ապա դնում կանոնավոր կիսադեմիդ, նիհար այտերիդ: Գոլորշին դարձյալ շղարշում է դեմքդ, երբ մի քանի անգամ կրկնում ես Աուրա անունը:

Անկողնուն թիկնած երկու սիգարետ ծխելուց հետո նայում ես ժամացույցին: Ելնում ես տեղիցդ, հագնում պիջակդ և սանրում վարսերդ: Հրում ես դուռը և աշխատում վերհիշել ճանապարհը, որով բարձրացել ես: Շատ կուզենայիր դուռը բաց թողնել, որպեսզի

կերոսինե լամպը ուղի ցույց տար քեզ, սակայն դա հնարավոր չէ, քանի որ զսպանակավոր դուռը ինքն իրեն փակվում է: Դուռը շարունակ ճոճելով՝ կարող էիր ուշանալ ընթրիքից: Կարող էիր և լամպը վերցնել քեզ հետ: Հրաժարվում ես նաև այդ մտքից, քանզի արդեն գիտես, որ այս տունը միշտ մթության մեջ թաղված պետք է մնա: Դու պարտադրված ես շոշափելով ծանոթանալ և ճանաչել տունը: Մեծ զգուշությամբ առաջ ես շարժվում՝ ձեռքերդ առաջ մեկնած, կույր-կույր, պատերին քսվելով, և ուսդ պատահաբար էլեկտրական լույսի կոճակն է սեղմում: Աչքերդ ճպճպացնելով կանգ ես առնում մի պահ այդ դատարկ, երկար, լուսավորված միջանցքի կենտրոնում: Միջանցքի ծայրին բազրիք ու պտտասանդուղք են երևում:

Իջնում ես աստիճանները հաշվելով. մեկ այլ նոր սովորույթ, որ քեզ սենյորա Լյորենտեի տունը կպարտադրի: Իջնում ես հաշվելով

և մի քայլ ետ ես ընկրկում, երբ հանկարծ ճագարի կարմիր աչքերին ես դեմ առնում, որ միանգամից ետ է շրջվում և ցատկոտելով հեռանում:

Նախասրահում ոտքդ կախ գցելու ժամանակ չունես, քանզի փայլատ ապակիներով մի կիսաբաց դռան առջև, աշտանակը ձեռքին՝ Աուրան է քեզ սպասում: Ժպտալով ընդառաջ ես գնում նրան և շեշտակի կանգ առնում՝ միաժամանակ մի քանի կատվի սրտաճմլիկ մլավոց լսելով,– այո, այո, Աուրային շատ մոտ կանգ ես առնում՝ ականջ դնելու, որպեսզի համոզվես, որ մի կատու չէ, այլ մի քանիսը), ապա նրա ետևից հյուրասրահ ես մտնում: Կատուներն են,– կասի Աուրան:– Այնքան շատ մկնե՛ր կան քաղաքի այս մասում:

Անցնում եք հյուրասրահով. անփայլ կերպասով պաստառված կահույք, ճենապակե արձանիկներով, երաժշտական ժամացույցներով, շքանշաններով և ապակե գնդիկներով ապակեփեղկեր, պարսկական գորգեր,

հովվերգական տեսարաններով նկարներ, թավշե կանաչ վարագույրներ: Աուրան էլ է կանաչ զգեստով:

– Հարմա՞ր եք տեղավորվել:

– Այո, բայց անհրաժեշտ է, որ անձնական իրերս վերցնեմ իմ...

– Դրա կարիքը չկա: Սպասավորն արդեն գնացել է ձեր իրերի ետևից:

– Պետք չէր նեղություն կրել:

Նրա ետևից ճաշասրահ ես մտնում: Նա աշտանակը սեղանի կենտրոնում է դնում: Դու զգում ես, որ սենյակում ցուրտ է ու խոնավ: Սրահի բոլոր պատերը մուգ գույնի, գոթական ոճով՝ սրանկյուն կամարներով ու վարդյակներով փորագրված փայտով են երեսպատված: Կատուները դադարել են մլավել: Նստելիս նկատում ես, որ չորս սպասք է դրված սեղանին, երկու մեծ ման տաք կերակուր՝ արծաթե կափարիչով ծածկված և կանաչավուն փառով պատված հին ու շողշողուն մի շիշ գինի:

Աուրան վերցնում է կափարիչը: Դու զգում ես սոխի սոուսով երիկամների սուր հոտը: Եվ մինչ նա լցնում է ափսեդ, դու վերցնում ես հին գինու շիշը և կարմիր ու խիտ հեղուկը տաշած կողերով ապակե բաժակները լցնում: Հետաքրքրությունից մղված՝ աշխատում ես կարդալ գինու պիտակը, սակայն փառը խանգարում է: Մյուս ամանից Աուրան ամբողջական խորոված լոլիկներ է հանում:

– Ներեցեք,– ասում ես դու՝ մյուս երկու սպասքին, ազատ աթոռներին նայելով:– Էլի՞ մարդիկ պիտի գան:

Աուրան շարունակում է լոլիկներն ափսեների մեջ դնել.

– Ոչ: Սենյորա Կոնսուելոն այսօր թույլ է զգում իրեն: Մեզ չի միանա:

– Սենյորա Կոնսուե՞լոն: Ձեր մորաքո՞յրը:

– Այո: Նա խնդրում է, որ ընթրիքից հետո իր մոտ անցնեք:

Ուտում եք լուռ ու մունջ: Խմում եք այդ բացառիկ խիտ գինին, և դու մերթ ընդ մերթ

շեղում ես հայացքդ, որպեսզի Աուրան չնկատի, որ հիպնոսացած և աներեսաբար իրեն ես նայում՝ չկարողանալով ինքդ քեզ տիրապետել: Հենց այդ պահից արդեն ուզում ես աղջկա դիմագծերը մտապահել: Սակայն ամեն անգամ հայացքդ շեղելիս արդեն մոռացած ես լինում դրանք, և անդիմադրելի շտապողականությամբ վերստին նրան ես նայում: Նա, ինչպես միշտ, ներքև է նայում, իսկ դու պիջակիդ գրպանում սիգարետի տուփը փնտրելիս հանկարծ փոքրիկ բանալի ես գտնում, բան ես հիշում և Աուրային ասում.

– Օ՛, լրիվ մոռացել էի, որ սեղանիս դարակներից մեկը բանալիով եմ փակել: Իսկ այնտեղ իմ բոլոր փաստաթղթերն են:

Իսկ նա քրթմնջում է.

– Այսինքն... Դուք ուզում եք գնա՞լ:

Հանդիմանության շեշտ է ինչում նրա խոսքերում: Դու շփոթվում ես և ձեռքդ երկարելով՝ մատիցդ կախված բանալին նրան ես մեկնում.

– Դե չէ՛, հրատապ չէ:

Սակայն նա խուսափում է քո մատների հպումից, ձեռքերը մնում են գոգին, ի վերջո բարձրացնում է հայացքը, և դու սկսում ես կասկածել քո զգայարաններին, այդ կանաչ, վճիտ, լուսաշող աչքերի հարուցած խռովքն ու գլխապտույտը վերագրում ես գինուն, ելնում ես տեղիցդ, կանգնում Աուրայի թիկունքում և շոյում գոթական աթոռի թիկնակը՝ չհամարձակվելով դիպչել աղջկա մերկ ուսերին, անշարժ պահած գլխին: Ճիգեր ես գործադրում, որպեսզի զսպես քեզ, շեղում ես ուշադրությունդ՝ ականջ դնելով քո թիկունքում գտնվող, ըստ երևույթին՝ խոհանոց տանող դռան անորսալի շրխկոցին, հայացքով զատում ես ճաշասրահի երկու տեսանելի հատվածները՝ աշտանակից ընկնող լույսի հոծ շրջանակը, որ լուսավորում է սեղանն ու զարդաքանդակ պատի մի ծայրը և դրա շուրջը տարածվող ավելի խոշոր՝ ստվերի շրջանակը: Ի վերջո համարձակվում ես

մոտենալ նրան, բռնել ձեռքը, բացել ափը և բանալին՝ գրավդ, դնել ողորկ ափի մեջ:

Եվ դու կտեսնես, թե ինչպես է նա փակում բուռը, փնտրում հայացքդ, «շնորհակալություն» շշնջում, վեր կենում և արագ հեռանում ճաշասրահից:

Իսկ դու նստում ես Աուրայի տեղը, ոտքերդ մեկնում, սիգարետ վառում՝ համակված բոլորովին անծանոթ մի երանությամբ, որ քո մասնիկն է եղել, բայց միայն հիմա ես լիարժեք ապրում այն՝ ազատություն տալով նրան, դուրս նետելով քեզնից, քանզի այս անգամ վստահ ես, որ երանությունն այդ անպատասխան չի մնալու... Իսկ քեզ սենյորա Կոնսուելոն է սպասում, աղջիկը զգուշացրեց այդ մասին՝ ընթրիքից հետո նա սպասում է քեզ...

Արդեն սովորել ես ճանապարհը: Ձեռքդ ես առնում աշտանակը, անցնում սրահով, դուրս գալիս նախասրահ: Դիմացիդ առաջին դուռը պառավինն է: Բռունցք արած մատներով բախում ես դուռը՝ առանց պատասխան

ստանալու: Նորից ես բախում: Հրում ես դուռը. չէ՞ որ նա սպասում է քեզ: Զգուշությամբ ներս ես մտնում և շշուկով կանչում.

– Սենյորա... Սենյորա...

Ըստ երևույթին՝ նա քեզ չի լսում, որովհետև նրան գտնում ես իր սրբարանի դիմաց ծնրադրած, գլուխը բռունցքներով պահած: Հեռվից դիտում ես նրան՝ ծնկաչոք, կոպիտ բրդե գիշերազգեստը հագին, գլուխը լղարիկ ուսերի մեջ քաշած, միջնադարյան արձանի պես նիհար ու վտիտ: Բարալիկ, ցանով ծածկված բորբոքված ոտքերը զույգ թելիկների նման դուրս են ցցվել շապիկի տակից, ենթադրում ես, որ մաշկն անընդհատ կոշտ բրդի հետ շփվելուց է բորբոքվել: Նայում ես այնքան, մինչև որ նա բարձրացնում է բռունցքները և անզոր հարվածներ տեղում օդում, ասես կռիվ է տալիս ինչ-որ պատկերների հետ, որոնց մոտենալով սկսում ես զատորոշել՝ Հիսուս, Մարիամ, սուրբ Սեբաստիան, սուրբ Լուսիա, Միքայել հրեշտակապետ, չարախինդ դևեր՝ միակ

ժպտացողներն այս վշտահար ու ցասումնալից սրբապատկերների շարքում: Մոմերի լույսով լուսավորված հին փորագրանկարում նրանք չարախնդալով եռաժանիները մեղանչածների մարմինն են մխրճում, եռացող կաթսաներից նրանց դուրս թափում, բռնաբարում կանանց, կոնծում ու հարբում, սրբերին արգելված ազատությունն են վայելում: Մոտենում ես սգացող Տիրամոր, արյունածոր խաչված Հիսուսի, ցնծացող Լյուցիֆերի, ցասումնալից հրեշտակապետի պատկերներով, սպիրտե անոթներում պահվող ներքին օրգաններով, արծաթե սրտիկներով շրջապատված կենտրոնական այդ պատկերին. սենյորա Կոնսուելոն ծնկաչոք սպառնում է բռունցքներով, բառեր է մռթմռթում, որոնք մոտիկից արդեն հնարավոր է լսել.

– Դե արի՛, երկնային արքայություն, ինչի՛ր, Գաբրիելի փող, օ՜հ, որքա՜ն է ուշանում այս աշխարհի վերջը:

Նա այնքան կխփի կրծքին, որ հազի նոպայով բռնված՝ գետնին կտապալվի պատկերների և

մոմերի առջև: Դու բռնում ես նրա արմունկնե-
րից և մեղմորեն դեպի մահճակալը տանում՝
զարմանալով կնոջ մարմնի չափերից՝ գրեթե
մանկահասակ աղջնակ, երկտակված, կու-
զիկ, կորացած մեջքով: Հասկանում ես, որ եթե
քո օգնությունը չլիներ, ստիպված էր լինե-
լու չորեքթաթ վերադառնալ անկողին: Պառ-
կեցնում ես նրան հացի փշրանքներով լցված
անկողնում, ծածկում ես հնամաշ փետրե վեր-
մակներով, սպասում, որ շնչառությունը կար-
գավորվի, իսկ նրա անարյուն այտերի վրայով
ակամա գլորվում են արցունքները:

– Ներեցեք... Ներեցեք, սենյոր Մոնտերո...
Մեզ՝ պառավներիս, միայն... աղոթքի հաճույքն
է մնացել... Թաշկինակս տվեք, խնդրում եմ:

– Օրիորդ Աուրան ասաց, որ...

– Այո, ճիշտ որ: Չեմ ուզում ժամանակ կորց-
նենք... Դուք պետք է... պետք է հնարավորինս
շուտ սկսեք աշխատել... Շնորհակալ եմ...

– Աշխատեք հանգստանալ:

– Շնորհակալ եմ... Վերցրեք...

Պառավը ձեռքերն օձիքին կտանի, կոճակները կարձակի, գլուխը կիջեցնի, որպեսզի պարանոցից մի ճմռթված, մանուշակագույն երիզ հանի, որն այժմ քեզ է հանձնում. երիզը ծանր է, վրայից պղնձե բանալի է կախված:

– Ահա այն անկյունում... Բաց արեք այդ սնդուկը և աջ կողմում, մյուս թղթերի վրա դրված... դեղին քուղիկով կապված թղթերը բերեք...

– Լավ չեմ տեսնում...

– Ախ, հա՛... Ախր ես այնքան եմ վարժվել մթությանը: Իմ աջ կողմով... Առաջ գնացեք և արկղի դիմաց կելնեք... Ախր մեզ պարսպապատել են, սենյոր Մոնտերո: Մեր շուրջը շինություններ են կառուցել և մեզ լույսից զրկել: Ինձ ուզում էին ստիպել տունը վաճառել: Միայն իմ մեռնելուց հետո: Այս տան հետ կապված մենք այնքա՜ն հուշեր ունենք: Ինձ միայն մեռած կարող են հանել այստեղից... Այ՛, հենց դա է: Շնորհակալություն: Կարող եք սկսել այս հատվածը կարդալ: Իսկ հետո մնացածն էլ կտամ:

Բարի գիշեր, սենյոր Մոնտերո: Շնորհակալ եմ: Տեսեք, ձեր մոմը հանգել է: Դրսում վառեք, խնդրում եմ: Ոչ, ո՛չ, բանալին թող ձեզ մոտ մնա: Վերցրեք: Ես վստահում եմ ձեզ:

– Սենյորա... Այնտեղ՝ անկյունում, մկների բույն կա ...

– Մկների՞: Ախր ես երբեք այդ մասը չեմ գնում...

– Կատուներին այստեղ պետք է բերեիք:

– Կատուների՞ն: Ի՞նչ կատուներ: Բարի գիշեր: Ես քնում եմ: Շատ հոգնած եմ:

– Բարի գիշեր:

3

Այդ նույն երեկոյան կարդում ես կապտամոխրագույն թանաքով գրված, տեղ-տեղ անզգուշորեն ծխախոտի մոխրով ծակծկված, ճանճերի հետքերով աղտոտված, խունացած թղթերը: Գեներալ Լյորենտեի ֆրանսերենը չի փայլում այն կատարելությամբ, որ կինն էր վերագրում նրան: Մտքումդ ասում

ես, որ դու էականորեն կարող ես բարելավել ոճը, կրճատել անցյալի իրադարձությունների երկար ու ձիգ շարադրանքը՝ մանկություն XIX դարի օախակյան[1] մի կալվածքում, ռազմական ուսուցում Ֆրանսիայում, բարեկամություն կոմս դը Մորնիի[2], Նապոլեոն III-ի[3] մտերիմ շրջապատի հետ, վերադարձ Մեքսիկա, ծառայություն Մաքսիմիլիանի[4] գլխավոր շտաբում,

---

1 Օախակա – Մեքսիկայի 32 նահանգներից մեկը:

2 Կոմս դը Մորնի (1811-1865) – Շարլ Օգյուստ Լուի դը Մորնի, ֆրանսիացի ազնվական, քաղաքական գործիչ և ֆինանսիստ, Նապոլեոն III-ի խորթ եղբայրը մոր կողմից:

3 Նապոլեոն III (1808-1873) – Շարլ Լուի Նապոլեոն Բոնապարտ, Նապոլեոն I Բոնապարտի եղբորորդին, Ֆրանսիայի Հանրապետության առաջին նախագահ 1848-1852թթ., ով 1852թ. զինվորականության օգնությամբ կատարել է պետական հեղաշրջում և հռչակվել կայսր Նապոլեոն III անունով մինչև 1870թ., երբ գահընկեց է արվել հեղափոխության կողմից:

4 1862թ. Նապոլեոն III-ի զորքերը գրավել են երկիրը և հայտարարել կայսրություն Մաքսիմիլիան I-ի գլխավորությամբ:

կայսերական շրջանի հանդիսավոր արարողություններ և երեկույթներ, ճակատամարտեր և տապալում[1], Սեռո դե լաս Կամպանաս[2], աքսորի տարիներ Փարիզում: Ոչ մի այնպիսի բան, որ ուրիշները պատմած չլինեն: Հանվում ես՝ մտորելով պառավի շեղված քմահաճույքի, այս հուշերին վերագրած նրա կեղծ գնահատականի շուրջ: Քթիդ տակ ժպտալով պառկում ես քնելու՝ քո ստանալիք չորս հազար պեսոյի մասին մտածելով:

Քնում ես հանգիստ, առանց երազների, մինչև առավոտվա վեցը, երբ արևի շողերն

---

[1] 1867թ. Նապոլեոն III-ն իր զորքերը հանել է Մեքսիկայից, որից հետո տեղացիները ջախջախել են Մաքսիմիլիան I-ի ուժերին, իսկ իրեն դատապարտել և գնդակահարել:

[2] Սեռո դե լաս Կամպանաս – թարգմանաբար՝ Զանգերի բլուր: Բարձունք է Մեքսիկայում, Կերետարո քաղաքի սահմաններում, որ հայտնի պատմական վայր է դարձել 1867թ. հունիսի 19-ին այնտեղ տեղի ունեցած երեք մահապատիժների շնորհիվ՝ կայսր Մաքսիմիլիանի և նրա երկու գեներալների, որոնցից մեկը երկրի նախկին նախագահն էր:

արթնացնում են քեզ, որովհետև ապակեպատ առաստաղին վարագույրներ չկան: Բարձով ծածկում ես աչքերդ և փորձում նորից քնել: Տասը րոպեից միտքդ փոխում ես և լոգարան գնում, որտեղ քո անձնական օգտագործման իրերն ես գտնում՝ սեղանի վրա շարած և սակավաթիվ հագուստդ՝ պահարանի մեջ կախած: Արդեն վերջացրած ես լինում սափրվելը, երբ թախանձագին ու սրտաճմլիկ մլավոցը խաթարում է առավոտվա լռությունը:

Մլավոցն ականջիդ է հասնում անտանելի, սրտակեղեք աղերսանքի ալիքներով: Փորձում ես հասկանալ որտեղից է գալիս. բաց ես անում միջանցք տանող դուռը, բայց այնտեղ ոչինչ չի լսվում, մլավոցները վերևից են գալիս՝ ձեղնանցքից: Ճեպով աթոռին ես բարձրանում, աթոռից՝ աշխատասեղանին և գրադարակին հենվելով՝ հասնում ես ձեղնանցքին, հաջողում ես բացել փեղկերից մեկը, ուժով վեր հրվել և հայացք գցել հարակից պարտեզին՝

իրար խճճված մոշի թփերով ու կենիներով լի այդ տարածքին, որտեղ հինգ-վեց կամ գուցե և յոթ կատուներ,- չես կարողանում հաշվել, որովհետև մի վայրկյանից ավելի չես կարողանում վեր ձգված մնալ,- մեկը մյուսին կպած, գունդուկծիկ դարձած՝ կրակի մեջ են գլորվում՝ թանձր ծուխ ու խանձված մորթու հոտ արձակելով: Բազկաթոռին ընկնելով՝ երկմտում ես՝ մի՞թե իրականում ես տեսել այդ ամենը. գուցե պարզապես այդ պատկերը կապել ես զարհուրելի մլավոցների հետ, որոնք շարունակվում են, ապա թուլանում, ի վերջո լռում:

Հագնում ես վերնաշապիկդ, թղթով սրբում սև կոշիկներիդ քթերը և հիմա էլ միջանցքներով անցնող և քո դռանը մոտեցող զանգի ղողանջն ես լսում: Միջանցք ես ելնում. Աուրան է գալիս այդ զանգը ձեռքին, խոնարհում գլուխը քեզ տեսնելուն պես, հայտնում, որ նախաճաշը պատրաստ է արդեն: Փորձում ես կանգնեցնել նրան, իսկ Աուրան արդեն

իջնում է պտտասանդուղքով՝ սև ներկված զանգը ծնգծնգացնելով, ասես մի ամբողջ ծերանոց կամ մանկատուն է ուզում արթնացնել:

Առանց պիջակդ հագնելու հետևում ես նրան, սակայն նախասրահ հասնելով՝ կորցնում ես հետքը: Պառավի սենյակի դուռն է բացվում քո թիկունքում. հասցնում ես տեսնել կիսաբաց դռան արանքից դուրս սահող ձեռքը, որ ճենապակյա գավաթը դնում է նախասրահում և ետ քաշվում՝ դուռն իր ետևից փակելով:

Ճաշասրահում նախաճաշդ սեղանին է արդեն, և այս անգամ՝ միայն մի սպասք: Արագ նախաճաշում ես և նախասրահ վերադառնում, թակում ես սենյորա Կոնսուելոյի դուռը: Թույլ ու ծվծվան ձայնը քեզ ներս է հրավիրում: Ամեն ինչ նույնն է. նույն անփոփոխ խավարը, մոմերի լույսի թրթիռը և արծաթափայլ հրաշք ցոլքերը:

– Բարի լույս, սենյոր Մոնտերո: Լա՞վ եք քնել:

– Այո: Մինչև ուշ գիշեր կարդում էի:

Տիկինը թափահարում է ձեռքը, ասես կամենում է քշել քեզ:

– Օ՛, ոչ, ոչ: Մի՛ շտապեք կարծիք հայտնել: Աշխատե՛ք այդ թղթերի վրա, հենց որ վերջացնեք, մնացածն էլ կտամ:

– Շատ բարի, սենյորա: Իսկ ես կարո՞ղ եմ պարտեզ դուրս գալ:

– Ի՞նչ պարտեզ, սենյոր Մոնտերո:

– Իմ սենյակի ետևում գտնվող պարտեզը:

– Այս տանը պարտեզ չկա: Մենք կորցրել ենք պարտեզը, երբ տան շուրջը շինություններ կառուցեցին:

– Մտածեցի, որ մաքուր օդում ավելի լավ կաշխատեի:

– Մեր ուզածը միայն այն ստվերոտ բակն է, որտեղով որ եկաք: Այնտեղ քրոջս աղջիկը որոշ ստվերասեր բույսեր է աճեցնում: Բայց եղած-չեղածը դա է:

– Պարզ է, սենյորա:

– Ես այսօր ամբողջ օրն ուզում եմ հանգստանալ: Երեկոյան անցեք ինձ մոտ:

– Շատ լավ, սենյորա:

Ամբողջ օրն անց ես կացնում նոթերը թերթելով՝ մաքրագրելով այն հատվածները, որոնք մտադիր ես նույնությամբ թողնել, վերաշարադրելով նրանք, որոնք թույլ են թվում քեզ, իրար ետևից ծխելով ու մտմտալով, որ մաս-մաս պետք է կատարես աշխատանքդ, որպեսզի հնարավորինս երկար պահպանես եկամտաբեր պաշտոնդ: Եթե հաջողես գոնե տասներկու հազար պեսո հավաքել, շուրջ մի տարի կարող ես քո սեփական հետաձգված, գրեթե մոռացության մատնված աշխատությամբ զբաղվել: Ամերիկայի հայտնագործմանը և իսպանական նվաճումներին նվիրված քո համապարփակ մեծածավալ աշխատությամբ: Մի աշխատություն, որն ընդհանրացնելու է անջատ-անջատ ներկայացված ժամանակագրությունը և հասկանալի է դարձնելու դրանք, բացահայտելու է ոսկեդարի բոլոր ձեռնարկների և արկածախնդիր նախաձեռնությունների, մարդկային նախատիպերի և

Վերածննդի դարաշրջանի մեծագույն իրադարձության միջև եղած փոխադարձ կապերը: Եվ իսկապես էլ, ի վերջո մի կողմ ես դնում կայսերական ռազմական գործչի տաղտկալի գրառումները և սկսում ես քո սեփական աշխատության ցանկն ու համառոտ բովանդակությունը շարադրել: Ժամանակը հոսում է աննկատ, և միայն կրկին զանգի ղողանջը լսելու պահին ես նայում ժամացույցին, հագնում պիջակդ և ճաշասրահ իջնում:

Աուրան արդեն սեղանի մոտ է, այս անգամ սեղանի գլուխը սենյորա Լյորենտեն է զբաղեցրել՝ իր շալի և գիշերազգեստի մեջ փաթաթորված, գլխանոցը գլխին, ափսեի վրա հակված: Սակայն չորրորդ սպասք էլ կա սեղանին: Դու հպանցիկ ես նկատում սպասքը, այն արդեն քեզ չի մտահոգում: Եթե քո ապագա ստեղծագործական ազատության գինը այս պառավի արտասովոր քմահաճույքներն ընդունելը պետք է լինի, դու այդ գինն առանց որևէ դժվարության կարող ես վճարել: Մինչ նա կուլ է

տալիս ապուրը, դու փորձում ես նրա տարիքը գուշակել: Ինչ-որ պահից սկսած արդեն հնարավոր չէ տարբերել տարիների ընթացքը, իսկ սենյորա Կոնսուելոն վաղուց արդեն հատել է այդ սահմանը: Գեներալը նրան չի հիշատակում իր հուշերի այն հատվածում, որ հասցրել ես ընթերցել: Սակայն եթե ֆրանսիացիների ներխուժման ժամանակ գեներալը քառասուներկու տարեկան է եղել և 1901-ին է մահացել, այսինքն՝ քառասուն տարի անց, ուրեմն ութսուներկու տարեկանում պետք է մահացած լինի: Ուստի սենյորա Կոնսուելոյի հետ Կերետարոյի պարտությունից և աքսորից հետո պետք է ամուսնացած լինի, բայց այդ ժամանակ նա տակավին դեռահաս աղջի՞կ է եղել...

Տարեթվերը կխառնվեն գլխիդ մեջ, քանզի արդեն սենյորան է խոսում իր սուր, նվաղ, ծտի ծվծվոցի նմանվող քրթմնջյունով: Աուրայի հետ է խոսում, իսկ դու, ուշքդ ուտելիքիդ, ականջ ես դնում ցավերին, նորանոր հիվանդությունների կասկածներին, դեղերի

թանկությանը, տան խոնավությանը վերաբերող գանգատների անվերջ շարանին: Ուզում ես ընտանեկան խոսակցության մեջ ընկնել և հարցնել, թե ո՞ւր է այն սպասավորը, որը երեկ գնաց իրերդ բերեց, որին սակայն այդպես էլ չես տեսել, որը ոչ մի անգամ սեղանը չի սպասարկում: Կհարցնեիր, եթե հանկարծ զարմանքով չնկատեիր, որ Աուրան մինչ այդ պահը բերան չէր բացել և ուտում էր մեքենայորեն, ասես կողմնակի մի ազդակի էր սպասում, որպեսզի ձեռքն առնի գդալը, դանակը, կտրատի երիկամները,– բերանիդ մեջ դարձյալ նույն երիկամներն ես զգում, ինչպես երևում է, այդ տան սիրած ուտելիքը,– և բերանը դնի: Արագ-արագ մեկ աղջկան ես նայում, մեկ մորաքրոջը, սակայն այդ պահին սենյորա Կոնսուելոն հանկարծ կանգ է առնում, և նույն պահին Աուրան էլ է դանակը դնում ափսեի մեջ և քարանում, իսկ դու հիշում ես, որ մեկ վայրկյան առաջ սենյորա Կոնսուելոն էլ էր նույն բանն արել:

Մի քանի րոպե լռություն է տիրում. դու համարյա ավարտում ես ուտելդ, իսկ նրանք արձանացած քո ուտելուն են հետևում: Վերջապես սենյորան ասում է.

– Շատ հոգնեցի: Չպետք է սեղան նստեի: Արի՛, Աուրա, արի՛ ինձ ննջարան տար:

Սենյորան կաշխատի գրավել ուշադրությունդ, ուղիղ երեսիդ կնայի, որ դու էլ իրեն նայես, թեև խոսքերն աղջկան են ուղղված: Ստիպված ես ջանքեր գործադրել այդ հայացքից պոկվելու համար,– դարձյալ լայն բացված, խաժ, դեղնավուն, զերծ շղարշներից ու խորշոմներից, որոնք սովորաբար թաքցնում են այդ հայացքը,– և Աուրայի վրա սևեռվել, ով իր հերթին անորոշ մի կետի է գամել աչքերը և անխոս շարժում է շուրթերը, ապա վեր է կենում այնպիսի շարժումներով, ասես երազում ես տեսնում նրան, թևանցուկ է անում կորաքամակ պառավին և ծանրաքայլ տանում է նրան ճաշասրահից:

Մենակ մնալով՝ սուրճ ես լցնում քեզ, որը ճաշի սկզբից ևեթ սեղանին էր և սառել էր արդեն, կում-կում խմում ես սառած սուրճը և հոնքերդ կիտելով՝ ինքդ քեզ հարց տալիս՝ գուցե սենյորան ինչ-որ գաղտնի իշխանությո՞ւն ունի օրիորդի վրա, գուցե օրիորդը՝ կանաչ շրջազգեստով քո գեղանի Աուրան, իր կամքին հակառա՞կ է փակված այս մռայլ ու հնամենի տանը: Ամեն դեպքում նրա համար ամենևին դժվար չէր լինի փախչել, երբ պառավը քնած էր լինում իր մութ սենյակում: Եվ անուշադրության չես մատնում նաև երևակայությանդ մեջ բացված մի ելք ևս. գուցե Աուրան սպասում է, որ դո՛ւ իրեն փրկես այն կապանքներից, որ ինչ-ինչ անհայտ պատճառներով նրան պահում են այս քմահաճ ու անհավասարակշիռ պառավի մոտ: Մտաբերում ես, թե ինչ տեսք ուներ Աուրան մի քանի րոպե առաջ. անզգայացած, վախից բթացած, բռնակալի ներկայությամբ որևէ բառ արտասանելու անկարող, շուրթերն անձայն շարժելով, կարծես անձայն

ազատություն թախանձեր քեզնից, սենյորա Կոնսուելոյի բոլոր շարժումները նմանակելու դատապարտված գերի, կարծես իրավունք ունի միմիայն պառավի արածները կրկնել:

Ըմբոստանում ես այս խելագարության հասցնող պատկերից, դիմում ես դեպի նախասրահում, սանդուղքի ծայրին, պառավի ննջարանի կողքին գտնվող դուռը. պետք է որ դա լինի Աուրայի սենյակը, տանն ուրիշ սենյակ չկա: Հրում ես դուռը և սենյակ մտնում. սպիտակեցրած պատերով նույնանման խավար սենյակ է, որտեղ միակ զարդարանքը սև խաչելությունն է: Զախ կողմում մի դուռ ես նկատում, որն ըստ երևույթին պառավի սենյակ է տանում: Ոտնաթաթերի վրա մոտենում ես դռանը, ձեռքդ դնում վրան, հետո միտքդ փոխում ես. Աուրայի հետ առանձին է պետք խոսել:

Իսկ եթե Աուրան ցանկանում է, որ իրեն օգնես, ուրեմն ինքը քո սենյակ կգա: Մնում ես քո սենյակում՝ մոռանալով խունացած

թղթերի, քո սեփական գրառումների մասին, մտորելով միայն Աուրայիդ աննյութական գեղեցկության մասին,– և որքան շատ ես մտածում, այնքան հոգեհարազատ է թվում նա քեզ, ոչ միայն այն պատճառով, որ դու մտածում ես նրա մասին և ցանկանում նրան, այլ որովհետև այժմ արդեն ցանկանում ես նրան կապանքներից ազատելու համար: Թերևս բարոյական դրդապատճառ ես գտել քո ցանկությունն արդարացնելու համար, այդպես քեզ անմեղ ու բավարարված կզգաս,– և երբ վերստին լսում ես զանգի կանչը, ընթրիքի չես իջնում, քանզի կեսօրվա տեսարանի նման մեկ այլ տեսարանի չես կարող դիմանալ: Գուցե Աուրան գլխի ընկնի և ընթրիքից հետո ինքը քեզ մոտ բարձրանա:

Մեծ ջանքեր ես թափում, որպեսզի շարունակես նոթերը կարդալ: Հոգնած հանվում ես անշտապ, տապալվում անկողնուն, իսկույն քուն մտնում և երկար տարիների ընթացքում առաջին անգամ երազ ես տեսնում:

Տեսնում ես մենավոր մի տուն, ոսկրոտ մի ձեռք, որ զանգը բռնած քեզ է մոտենում, մեկը բղավում է, որ հեռու մնաս, որ բոլո՛րը հեռու մնան, և երբ դատարկ ակնախոռոչներով դեմքը ընդհուպ մոտենում է քո դեմքին, վեր ես թռչում՝ ճիչը կոկորդումդ համրացած, սառը քրտնքի մեջ կորած և զգում ես, որ ինչ-որ մեկի ձեռքերը շոյում են դեմքդ ու մազերդ, շուրթերը կամացուկ սփոփանքի խոսքեր են շշնջում, անդորր ու սեր են ուզում քեզնից: Երկարում ես ձեռքերդ, որպեսզի գտնես մարմինը, իսկ այն մերկ է, և մեղմիկ ճոճում է բանալին, որը ճանաչում ես իսկույն և բանալու հետ միասին՝ նաև կնոջը, որ պառկում է վրադ, համբուրում քեզ, ոտքից գլուխ համբույրներով ծածկում մարմինդ: Չես կարողանում տեսնել նրան անաստղ գիշերվա խավարի մեջ, սակայն շնչում ես վարսերից բուրող բակի բույսերի անուշահոտը, զգում ես թևերի նուրբ ու տենչալի մաշկը, շոշափում ես զգայուն ջղերից հյուսված ստինքների բողբոջները, նորից ու

նորից ես համբուրում նրան, և խոսքերն ավելորդ են դառնում:

Երբ ուժասպառ ազատվում ես նրա գրկից, շշուկով արտասանած նրա առաջին բառերն ես լսում. «Դու իմ ամուսինն ես»: Դու գլխով ես անում: Եվ նա քեզ կասի, որ լույսը բացվում է արդեն, հրաժեշտ տալիս կխոստանա, որ գիշերն իր սենյակում կսպասի քեզ: Դու նորից գլխով կանես, ապա խաղաղված, թեթևացած, հաճույքներից դատարկված քուն կմտնես՝ մատներիդ ծայրին տակավին զգալով Աուրայի մարմինը, նրա թրթիռները, տրվելը: Քո փոքրիկ աղջնակ Աուրայի:

Դժվարությամբ ես արթնանում: Ինչ-որ մեկն անընդմեջ թակում է դուռը, և դու ծանր-ծանր, փնթփնթալով վեր ես կենում անկողնուց: Աուրան դռան մյուս կողմից կասի, որ պետք չի բացել, սենյորա Կոնսուելոն է ուզում խոսել քեզ հետ, իր սենյակում սպասում է քեզ:

Տասը րոպե անց այրու սրբարանն ես մտնում: Տաք-տաք փաթաթված է վերմակով,

պատսպարված ժանեկանախշ բարձերով: Մոտենում ես անշարժ կերպարանքին, տեսնում ես անգույն, կնճռապատ, կախ ընկած կոպերի տակ փակված աչքերը, այտոսկրերի տակ կախված կնճիռների պարկիկները, ամբողջովին հալումաշ եղած մաշկը:

Առանց աչքերը բացելու քեզ կասի.

– Բանալին ձեզ մո՞տ է:

– Այո... Կարծես թե: Այո, ահա՛:

– Կարող եք հաջորդ հատվածը կարդալ: Նույն տեղում է, կապույտ ժապավենով կապված:

Այս անգամ զզվանքով ես սնդուկի կողմը գնում, որի շուրջը մկներն են վխտում, հատակի փտած տախտակների տակից դուրս են տնկում իրենց պսպղուն աչուկները, վազվզում են դեպի քերծքրծված պատերի տակ բացված խոռոչներն ու ետ դառնում: Բաց ես անում սնդուկն ու հանում նոթերի երկրորդ տրցակը, ետ ես գալիս մահճակալի մոտ: Սենյորա Կոնսուելոն շոյում է իր սպիտակ ճագարին:

Պառավի պինդ-պինդ կոճկված կոկորդից խուլ ծկլթոց դուրս կգա.

– Դուք կենդանիներ չե՞ք սիրում:

– Ոչ: Ոչ այնքան: Գուցե այն պատճառով, որ երբեք չեմ ունեցել:

– Նրանք լավ բարեկամներ են, լավ ընկերներ: Նամանավանդ, երբ ծերությունն ու միայնությունն են գալիս:

– Այո: Երևի:

– Նրանք շատ բնական են, սենյոր Մոնտերո: Գայթակղություններ չունեցող արարածներ են:

– Ասում եք անունն ինչ է՞ր:

– Ո՞ւմ, ճագարի՞: Սագա: Իմ խելո՛ք: Իր բնազդներով է ապրում: Բնական է և ազատ:

– Կարծում էի՝ արու է:

– Ախ, դուք չե՞ք էլ տարբերում:

– Դե, ոչինչ, կարևորն այն է, որ դուք ձեզ միայնակ չզգաք:

– Ուզում են, որ մենակ մնանք, որովհետև ասում են՝ իբր միայնությունն անհրաժեշտություն է սրբագործվելու համար: Մոռանում են,

որ միայնության մեջ գայթակղություններն ավելի շատ են:

– Չեմ հասկանում ձեզ, սենյորա:

– Դե, ավելի լավ, ավելի լավ: Կարող եք շարունակել ձեր գործը:

Շրջվում ես, դեպի դուռն ես դիմում, դուրս ես գալիս սենյակից: Նախասրահում ատամներդ ես կրճտացնում. «Ինչո՞ւ չես համարձակվում նրան ասել, որ սիրում ես աղջկան: Ինչո՞ւ ներս չես մտնում և միանգամից ասում, որ աշխատանքդ ավարտելուց հետո մտադիր ես հետդ տանել Աուրային»: Կրկին դեպի դուռն ես դիմում, դեռևս տատանվելով՝ հրում ես այն և դռան արանքից սենյորա Կոնսուելոյին ես տեսնում՝ ոտքի վրա, մեջքն ուղիղ, կերպարանափոխված, թևերին ինչ-որ շինել գցած. ոսկեգույն կոճակներով, ծոպավոր կարմիր ուսադիրներով, թագակիր արծվի պատկերով փայլուն տարբերանշանով կապույտ մի շինել, որ պառավը մեկ կծոտում է մոլեգին, մեկ համբուրում

քնքշանքով, մեկ ուսերին է գցում և պտտվում պարային երերուն քայլերով: Կամաց փակում ես դուռը:

«Այո, նա տասնհինգ տարեկան էր, երբ ծանոթացա նրա հետ,– կարդում ես հուշերի երկրորդ տրցակում,– elle avait quinze ans lorsque je l'ai connue et, si j'ose le dire, ce sont ses yeux verts qui ont fait ma perdition»[1]: Կոնսուելոյի կանաչ աչքերը, ով 1867 թվականին տասնհինգ տարեկան է եղել, երբ գեներալ Լյորենտեն ամուսնացել է նրա հետ և իր հետ աքսորավայր՝ Փարիզ տարել: «Ma jeune pouée,– գրում է գեներալը խանդավառված պահերին,– ma jeune pouée aux yeux verts; je t'ai comblée d'amour»[2]: Նա նկարագրում է տունը, որտեղ ապրել են, իրենց

---

[1] Նա տասնհինգ տարեկան էր, երբ ծանոթացա նրա հետ, և եթե անկեղծ լինեմ, նրա կանաչ աչքերն էին, որ իմ կորստյան պատճառը դարձան *(ֆր.)*:

[2] Իմ փոքրիկ տիկնիկ, իմ փոքրիկ տիկնիկ կանաչ աչքերով, ես տոգորված եմ քո սիրով *(ֆր.)*:

զբոսանքները, պարահանդեսները, կառքերը, երկրորդ կայսրության աշխարհիկ հասարակությունը, սակայն, աներկբայորեն, ոչ այնքան արտահայտիչ եղանակով: «J'ai meme supporte ta haine des chats, moi qu'aimais tellement les jolies betes...»[1]: Մի օր նա տեսել է, թե ինչպես է կինը փեշը առջևի մասում հավաքած, ոտքերը բացած տանջահար անում մի կատվի, և չի կարողացել նրան կանգնեցնել, որովհետև իրեն թվացել է, որ «tu faisais ça d'une façon si innocent, par pur enfantillage»[2], և տեսարանն այնքան է գրգռել նրան, որ այդ նույն գիշերը, եթե կարդացածիդ հավատալու լինես, խելահեղ կրքով սիրել է նրան, «parce que tu m'avais dit que torturer les chats était ta manière a toi de rendre notre amour favorable,

---

1 Ես հաշտվել էի անգամ կատուների հանդեպ ունեցած քո ատելության հետ, ես, որ այնքան շատ էի սիրում այդ սիրունիկ կենդանիներին *(ֆր.)*:

2 Դու այնքան անմեղ ձևով էիր դա անում, այնքան մանկամտորեն *(ֆր.)*:

par un sacrifice symbolique...»[1]: Եվ դու հավանաբար հաշվել ես. սենյորա Կոնսուելոն այսօր հարյուր ինը տարեկան կլինի... Շրջում ես էջը: Նա քառասունինը տարեկան է եղել, երբ մահացել է ամուսինը: «Tu sais si bien t'habiller, ma douce Consuelo, toujours drappe dans des velours verts, verts comme tes yeux. Je pense que tu seras toujours belle, meme dans cent ans...»[2]: Մշտապես կանաչ հանդերձանքով: Մշտապես գեղեցիկ, անգամ հարյուր տարի հետո: «Tu es si fière de ta beauté; que ne ferais-tu pas pour rester toujours jeune?»[3]:

---

1 Որովհետև դու ինձ ասել էիր, որ կատուներին խոշտանգելով դու քո ձևով խորհրդանշական զոհ ես մատուցում հանուն մեր սիրո *(ֆր.)*:

2 Դու այնքա՜ն լավ ես հագնվում, իմ անուշիկ Կոնսուելո, միշտ քո կանաչ թավիշների մեջ, կանաչ, ինչպես քո աչքերը: Ես կարծում եմ, որ դու հավերժ գեղեցիկ ես լինելու, նույնիսկ հարյուր տարեկանում *(ֆր.)*:

3 Դու այնքան ես հպարտանում քո գեղեցկությամբ, չէ՞ որ ամեն ինչ կանես հավերժ երիտասարդ մնալու համար *(ֆր.)*:

4

Էջը շրջելու պահին արդեն գիտես, թե ինչու է Աուրան այս տանն ապրում՝ խելքը թոցրած խեղճ պառավի երիտասարդության և գեղեցկության պատրանքը հավերժացնելու համար: Աուրան փակված է այստեղ որպես հայելի, որպես ևս մի սրբապատկեր հրաշալիքներով, սրտիկներով, երևակայական դևերով ու սրբերով առլեցուն այդ խորանում:

Թղթերը մի կողմ ես նետում և ցած իջնում՝ գուշակելով այն միակ տեղը, որտեղ կարող է լինել Աուրան առավոտյան, այն միակ տեղը, որ հատկացրել է նրան շահամոլ պառավը:

Եվ իրոք, խոհանոցում ես գտնում նրան, ուլ մորթելու պահին: Կտրված վզից ելնող գոլորշուց, թափված արյան հոտից, կենդանու լայն

բացված ու սառած աչքերից սիրտդ խառնում է: Այս տեսարանի ետևում անփույթ հագնված, խռիվ մազերով, արյան ցայտերով աղտոտված Աուրայի աղոտ կերպարանքն է հառնում, որ նայում է քեզ և չի ճանաչում, որ մսագործի իր աշխատանքն է շարունակում:

Շրջվում-հեռանում ես. չէ՛, այս անգամ խոսելու ես պառավի հետ, երեսով ես տալու նրա շահամոլությունն ու նողկալի բռնակալ վերաբերմունքը: Թափով բաց ես անում դուռը և նրան տեսնում լույսի շղարշի ետևում, ոտքի կանգնած, իր օդային պատարագն անելիս: Ձեռքերն օդում պարզած ինչ-որ շարժումներ է անում. մի ձեռքը առաջ է մեկնել և սեղմել, կարծես ուժով ինչ-որ բան է պահում, մյուս ձեռքով օդեղեն մի առարկա սեղմած՝ մի քանի անգամ միևնույն տեղին է հարվածում: Ապա կրծքին քսելով սրբում է ձեռքերը, հոգոց հանում և դարձյալ սկսում օդը կտրատել, ասես,– այո, այո, դու դա պարզ տեսնում ես,– կենդանի է մաշկում:

Սուրում ես նախասրահով, սրահով, ճաշասրահով, հասնում ես խոհանոց, որտեղ Աուրան, իր գործի մեջ խորասուզված, դանդաղ մաշկում է ուլը՝ չլսելով ո՛չ ոտնաձայներդ, ո՛չ խոսքերդ, բացակա հայացքով նայելով քեզ, կարծես օդեղեն լինես:

Ծանրաքայլ քո ննջասենյակն ես ելնում, ներս ես մտնում, քեզ դռան վրա ես գցում, մեջքով հենվում, կարծես ինչ-որ մեկը ետևիցդ ընկած լինի. շունչդ կտրվում է, քրտինքը թափվում է վրայիցդ, թիկունքդ սառչում է, ինքնավստահությունդ հոդս է ցնդում անզորության զգացումից: Եթե ինչ-որ բան կամ ինչ-որ մեկն այդ պահին փորձեր ներս մտնել, ի վիճակի չէիր լինելու դիմադրել, կհեռանայիր դռան մոտից, թույլ կտայիր, որ ներս մտներ: Տենդագին վերցնում ես բազկաթոռը, դնում չկողպվող դռան դիմաց, մահճակալն ես քարշ տալիս դռան մոտ, մինչև որ արգելափակում ես այն և ուժասպառ նետվում անկողնուն. ուժասպառ և կամազուրկ,

աչքերդ գոց, ձեռքերով բարձդ պինդ գրկած՝ բարձդ, որը բնավ էլ քոնը չէ, և ոչ մի բան այստեղ քոնը չէ...

Ընկնում ես թմբիրի մեջ, ընկնում ես մորփեոսի գիրկը, որ միակ փրկությունդ է, չխելագարվելու միակ գրավականը: «Նա խելագար է, նա խելագար է»,– կրկնում ես, որպեսզի թնեցնես ինքդ քեզ՝ բառերի հետ վերհիշելով նաև օդեղեն դանակով օդեղեն ուլին օդում մաշկող պառավի կերպարանքը: «...Խելագար է...»,– կրկնում ես մութ անդունդի հատակին՝ բերանդ բաց, համրաձայն, և երազիդ մեջ տեսնում ես, իբր անդունդի մութ խորքերից պառավը լռելյայն քեզ ընդառաջ է գալիս, այն էլ՝ չորեքթաթ:

Անձայն, ոսկրոտ ձեռքը շարժելով՝ նա քո կողմն է գալիս, մոտենում է ընդհուպ, մինչև որ դեմքը գրեթե դիպչում է քո դեմքին, և դու տեսնում ես պառավի արնածոր, անատամ լնդերն ու ճչում, և նա սկսում է հեռանալ՝ ձեռքը շարժելով, անդունդի երկայնքով ցանելով արյան

բծերով պատված գոգնոցից հանած դեղնած ատամները: Քո ճիչը երազիդ մեջ քո դիմաց հայտնված Աուրայի ճիչի արձագանքն է՝ Աուրայի, որ ճչում է, քանի որ ինչ-որ մեկի ձեռքերը մեջտեղից պատառոտել են նրա կերպասե կանաչ զգեստի փեշը, և ճղճղված փեշի ծալքերը ձեռքերով պահած՝ նա խուզած գլուխը քո կողմ է շրջում և անձայն հռհռում՝ սեփական ատամների վրա շարած պառավի ատամներն ի ցույց հանելով, իսկ Աուրայի ոտքերը, նրա մերկ ոտքերը կոտրվում-պոկվում են և անդունդը թռչում...

Դռան թակոց ես լսում, թակոցից հետո՝ զանգի ծնգծնգոցը՝ ընթրիքի ազդանշանը: Գլխացավդ թույլ չի տալիս, որ ժամացույցի թվերն ու սլաքները տեսնես: Միայն գիտես, որ ուշ է. բարձին դրած գլխիդ դիմաց՝ ձեղնանցքից անդին, իրիկնային ամպերն են լողում: Ելնում ես ծանր-ծանր, շշմած ու սաստիկ քաղցած: Ապակե ջրամանը պահում ես լոգարանի ծորակի տակ, բացում ջուրը, սպասում ես

ջրամանը լցվի, ապա ջուրը դատարկում ես լվացարանի մեջ, լվանում դեմքդ, կանաչավուն մածուկի հետքեր կրող հնամաշ խոզանակով մաքրում ատամներդ, ցողում մազերդ,– չնկատելով, որ այդ ամենը հակառակ կարգով պետք է անեիր,– խնամքով սանրվում ես ընկուզափայտե պահարանի ձվաձև հայելու դիմաց, կապում փողկապդ, հագնում պիջակդ և իջնում դատարկ ճաշասրահը, որտեղ միայն մի սպասք է դրված սեղանին՝ քոնը:

Իսկ քո ափսեի կողքին՝ անձեռոցիկի տակ, ինչ-որ առարկա կա, որը շոշափում ես մատներիդ ծայրով. փափուկ տիկնիկ է՝ լաթից կարված, ալյուրով լցված, որը թափվում է կարաքանդ ուսից, դեմքը տուշով նկարված, անշոր մարմնի մասերը թեթև վրձնահարվածներով ուրվագծված: Ուտում ես սառը ընթրիքդ,– դարձյալ երիկամ, լոլիկ, գինի,– աջ ձեռքով, ձախ ձեռքիդ մեջ տիկնիկն ես պահում:

Ուտում ես մեքենայորեն, ձախ ձեռքիդ մեջ՝ տիկնիկը, աջում՝ պատառաքաղը, սկզբում

ինքդ քեզ հաշիվ չտալով, որ հիպնոսացածի վարքագիծ ես դրսևորում, իսկ հետո աղոտ կռահում ես ծանր քնիդ, մղձավանջային երազիդ պատճառը, վերջում քո լուսնոտ շարժումները նմանեցնում ես Աուրայի շարժումներին, պառավի շարժումներին՝ զզվանքով նայելով գարշելի տիկնիկին, որին շոյում ես մատներով և սկսում կասկածել, որ գաղտնի մի հիվանդություն, մի վարակ կարող է թաքնված լինել նրա մեջ: Հատակին ես գցում տիկնիկը: Բերանդ սրբում ես անձեռոցիկով: Նայում ես ձեռքիդ ժամացույցին և հիշում, որ Աուրան քեզ ժամադրել է իր ննջասենյակում:

Զգուշությամբ մոտենում ես դռնյա Կոնսուելոյի դռանը և ոչ մի շշուկ չես լսում: Նորից ես նայում ժամացույցին. ժամը ինը չկա: Որոշում ես պատերը շոշափելով իջնել այն ծածկավոր, անարև բակը, ուր այդպես էլ չէիր գնացել այն պահից ի վեր, երբ այս տուն ոտք դնելու օրը առանց նկատելու անցար բակի միջով:

Շոշափում ես խոնավ, փառակալած պատերը, շնչում անուշաբույր օդը և ուզում ես զատորոշել հոտերը, ճանաչել քեզ պարուրող թանձր, փառահեղ բույրերը: Լուցկու բոցը թրթռալով լուսավորում է այդ նեղլիկ ու խոնավ, սալարկված բակը, որի երկու կողմերում կարմրավուն ու փխրուն հողաշերտի վրա ցանովի բույսեր են աճում: Զանազանում ես բարձր ու ճյուղաշատ որոշ բույսեր, որոնց ստվերները երևում են լուցկու լույսի ներքո, սակայն լուցկին վառվում է մինչև վերջ, այրում մատներդ, ստիպում քեզ նորը վառել, որպեսզի մինչև վերջ ծանոթանաս հին տարեգրքերում հիշատակված ծաղիկների, պտուղների, ցողունների հետ. ահա մոռացված հոտավետ թմրախոտերը, ահա բանգի լայն, երկար, սղոցաեզր, թավշոտ տերևները, ներսից կարմիր, դրսից դեղին ծաղիկներով պատված հանգուցավոր ցողունը, ահա մորմի սրտաձև ու սրածայր տերևները, ահա կռատուկի մոխրաթաթավ ու խավոտ տերևները,

փշփշոտ ծաղիկները, ահա իլենու ծյուղառատ թուփն ու սպիտակավուն ծաղիկները, ահա շնախաղողը: Նրանք կենդանություն են ստանում քո լուցկու լույսի ներքո, օրորվում են իրենց ստվերների հետ միասին, մինչ դու հիշողությանդ մեջ վերականգնում ես այդ հերբարիումի գործածությունները, որոնք մեծացնում են բիբերը, բթացնում ցավը, հեշտացնում ծննդաբերությունը, թուլացնում կամքը, սփոփում արբեցնող խաղաղությամբ:

Երբ հանգչում է լուցկու երրորդ հատիկը, մենակ ես մնում բույրերի հետ: Դանդաղ բարձրանում ես նախասրահ, ականջդ վերստին սենյորա Կոնսուելոյի դռանն ես հպում, ոտնաթաթերի վրա գնում Աուրայի դռան մոտ, առանց զգուշացնելու հրում դուռը և մտնում դատարկ ննջասենյակը, որտեղ լույսի շրջանակը լուսավորում է մահճակալը, մեքսիկական խաչելությունը և կնոջը, որ դեպի քեզ է գալիս, երբ դուռը փակվում է:

Աուրան կանաչ կերպասից խալաթ է հագել, որի միջից քեզ ընդառաջ գալու պահին կնոջ լուսնասպիտակ ազդրերն են երևում: Կին,– կկրկնես մտքիդ մեջ, երբ նա քեզ հասնի,– կին, ոչ թե երեկվա դեռատի օրիորդը: Երեկվա օրիորդը,– կմտածես, երբ նրա մատներին դիպչես, մեջքը գրկես,– քսանից ավել չէր կարող լինել, իսկ այսօրվանը,– երբ արձակ թուխ վարսերը, դալուկ այտերը շոյես,– քառասնամյա կին է թվում. երեկվանից ինչ-որ բան է կարծրացել կանաչ աչքերի շուրջը, շուրթերի ալ կարմիրը մգացել է նախկին եզրագծերից դուրս՝ կարծես փորձելով անորոշ մի ժպիտ, ուրախ արտահայտություն պահպանել դեմքին՝ բակի այն բույսերի նման համադրելով մեղրի անուշահամն ու դառնությունը: Ավելին մտածելու ժամանակ չունես:

– Նստիր ակողնուն, Ֆելիպե:

– Լավ:

– Արի խաղանք: Դու ոչինչ չես անելու: Թող ես անեմ ամեն ինչ:

փշփշոտ ծաղիկները, ահա իլենու ծյուղառատ թուփն ու սպիտակավուն ծաղիկները, ահա շնախաղողը: Նրանք կենդանություն են ստանում քո լուցկու լույսի ներքո, օրորվում են իրենց ստվերների հետ միասին, մինչ դու հիշողությանդ մեջ վերականգնում ես այդ հերբարիումի գործածությունները, որոնք մեծացնում են բիբերը, բթացնում ցավը, հեշտացնում ծննդաբերությունը, թուլացնում կամքը, սփոփում արբեցնող խաղաղությամբ:

Երբ հանգչում է լուցկու երրորդ հատիկը, մենակ ես մնում բույրերի հետ: Դանդաղ բարձրանում ես նախասրահ, ականջդ վերստին սենյորա Կոնսուելոյի դռանն ես հպում, ոտնաթաթերի վրա գնում Աուրայի դռան մոտ, առանց զգուշացնելու հրում դուռը և մտնում դատարկ ննջասենյակը, որտեղ լույսի շրջանակը լուսավորում է մահճակալը, մեքսիկական խաչելությունը և կնոջը, որ դեպի քեզ է գալիս, երբ դուռը փակվում է:

Աուրան կանաչ կերպասից խալաթ է հագել, որի միջից քեզ ընդառաջ գալու պահին կնոջ լուսնասպիտակ ազդրերն են երևում: Կին,– կկրկնես մտքիդ մեջ, երբ նա քեզ հասնի,– կին, ոչ թե երեկվա դեռատի օրիորդը: Երեկվա օրիորդը,– կմտածես, երբ նրա մատներին դիպչես, մեջքը գրկես,– քսանից ավել չէր կարող լինել, իսկ այսօրվանը,– երբ արձակ թուխ վարսերը, դալուկ այտերը շոյես,– քառասնամյա կին է թվում. երեկվանից ինչ-որ բան է կարծրացել կանաչ աչքերի շուրջը, շուրթերի ալ կարմիրը մգացել է նախկին եզրագծերից դուրս՝ կարծես փորձելով անորոշ մի ժպիտ, ուրախ արտահայտություն պահպանել դեմքին՝ բակի այն բույսերի նման համադրելով մեղրի անուշահամն ու դառնությունը: Ավելին մտածելու ժամանակ չունես:

– Նստիր ակողնուն, Ֆելիպե:

– Լավ:

– Արի խաղանք: Դու ոչինչ չես անելու: Թող ես անեմ ամեն ինչ:

Անկողնուն նստած՝ փորձում ես գտնել աղոտ, օպալագույն լույսի աղբյուրը, որի մեջ Աուրային և առարկաները հազիվ ես տարբերում նրանց պարուրող ոսկեգույն մշուշից: Ըստ երևույթին՝ նա տեսնում է, որ դու, լույսի աղբյուրը որոնելով, վերև ես նայում: Զայնից գուշակում ես, որ նա ծնկել է քո դիմաց.

– Երկինքը ոչ բարձր է, ոչ ցածր: Մեր վերևում ու ներքևում է միաժամանակ:

Դու կհանես կոշիկներդ ու գուլպաներդ, և նա կշոյի մերկ ոտքերդ:

Զգում ես, որ գոլ ջուր է լցվում ոտնաթաթերիդ, հանգստացնում, և նա կոշտ լաթով սրբում է ոտքերդ՝ երբեմն աչքի տակով փայտե սև խաչելությանը նայելով, ի վերջո բաց է թողնում ոտքերդ, բռնում ձեռքդ, մի քանի մանուշակ է խրում արձակ վարսերի մեջ, քեզ գիրկն է առնում և ինչ-որ մեղեդի՝ վալսի մեղեդի դնդնում կամացուկ, և դու պարում ես նրա հետ՝ հմայված նրա մեղմիկ երգով, պտտվելով նրա թելադրած դանդաղ, հանդիսավոր

ռիթմով, որ խորթ է նրա ձեռքերի թեթև շարժումներին, որոնք արձակում են վերնաշապիկիդ կոճակները, շոյում են կուրծքդ, սահում մեջքիդ վրայով և ամուր գրկում քեզ: Դու էլ ես շշուկով երգում այդ անբարբառ երգը, այդ մեղեդին, որ ինքնաբերաբար դուրս է հորդում քո կոկորդից: Դուք պտտվում եք երկուսով՝ ավելի ու ավելի մոտենալով անկողնուն, Աուրայի շուրթերին դրոշմած քո անհագ համբույրներով դու խլացնում ես երգը, Աուրայի ուսերին, կրծքերին տեղացող քո եռանդագին համբույրներով կաշկանդում ես պարը:

Դատարկ խալաթն է մնացել ձեռքիդ: Աուրան անկողնու վրա պպզած՝ ինչ-որ բան է դնում իրար միացրած ազդրերի վրա, շոյում է, ձեռքով կանչում քեզ: Բարակ բլիթի կտոր է շոյում, որը երկու կես է անում՝ ուշադրություն չդարձնելով ազդրերի վրայով սահող փշուրներին: Նշխարի կեսը քեզ է տալիս, դու վերցնում ես այն, բերանդ ես դնում նրա հետ միաժամանակ, կուլ տալիս դժվարությամբ:

Ընկնում ես Աուրայի մերկ մարմնի վրա, բացված թևերի վրա, որ նա տարածել է մահճակալի լայնքով մեկ՝ պատից կախված խաչելության ալ կարմիր մետաքսե ազդրաշորով, բաց ծնկներով, խոցված կողով, խճճված ու արծաթագույն փայլքերի հետ խառնված սև կեղծամի վրա դրված հավամրգու պսակով Քրիստոսի հանգույն: Եվ Աուրան կբացվի՝ որպես խորան:

Աուրայի անունն ես շշնջում նրա ականջին: Հասուն կնոջ գիրգ թևերն ես զգում թիկունքիդ: Նրա ջերմ ձայնն ես լսում ականջիդ տակ.

– Միշտ սիրելո՞ւ ես ինձ:

– Միշտ, Աուրա, հար-հավիտյան սիրելու եմ քեզ:

– Մի՞շտ: Երդվո՞ւմ ես:

– Երդվում եմ:

– Թեկուզ և պառավե՞մ: Թեկուզ և տգեղանա՞մ: Թեկուզ և մազերս ճերմակե՞ն:

– Միշտ, սեր իմ, միշտ:

– Թեկուզ և մեռնե՞մ, Ֆելիպե: Ինձ սիրելու ես հավե՞րժ, թեկուզ և մեռնե՞մ:

– Միշտ, միշտ: Երդվում եմ: Ոչ ոք չի կարող մեզ իրարից բաժանել:

– Արի ինձ մոտ, Ֆելիպե, արի՛...

Արթնանալուն պես փակ աչքերով Աուրայի մարմինն ես փնտրում, բայց ձեռքդ լոկ դեռևս գոլ բարձին է դիպչում և քեզ պարուրող ճերմակ սավաններին:

Դարձյալ նրա անունն ես շշնջում:

Բաց ես անում աչքերդ և տեսնում նրան. մահճակալի ոտնակողմում կանգնած ժպտում է, բայց քե՛զ չի նայում: Դանդաղ քայլում է դեպի սենյակի խորքը, նստում հատակին, թևերը դնում սև ծնկների վրա, որ դուրս են սահում խավարի միջից, ուր դու փորձում ես թափանցել հայացքով, շոյում է խորշոմած ձեռքը, որ առաջ է գալիս ավելի ու ավելի հստակվող մթության խորքից: Պառավ սենյորա Կոնսուելոյի ոտքերի մոտ է նա, որ նստած է մի բազկաթոռի մեջ, որն առաջին

անգամ ես նկատում, սենյորա Կոնսուելոյի, ով ժպտում է քեզ գլխով անելով, ժպտում է Աուրայի հետ միասին, որ պառավի հետ միաժամանակ տմբտմբացնում է գլուխը. երկուսով ժպտում են քեզ և գոհունակություն հայտնում: Գլուխդ բարձին ետ ընկած, անկամք մտածում ես, որ այդ ամբողջ ընթացքում պառավը սենյակում է եղել, հիշում ես նրա շարժումները, ձայնը, պարը, որքան էլ որ ինքդ քեզ համոզես, որ նա այստեղ չի եղել:

Նրանք երկուսով միաժամանակ վեր կկենան՝ Կոնսուելոն՝ բազկաթոռից, Աուրան՝ հատակից: Երկուսով կշրջվեն, համրաքայլ կշարժվեն դեպի պառավի ննջարանը տանող դուռը, երկուսով կմտնեն այն սենյակը, ուր պատկերների դիմաց շարված մոմերի բոցն է վետվետում, իրենց ետևից կփակեն դուռը, կթողնեն, որ դու քնես Աուրայի անկողնում:

5

Քուն ես մտնում հոգնաբեկ, դժգոհ: Քնի մեջ էլ ես շարունակում զգալ այդ անորոշ տրտմությունը, կուրծքդ ճնշող մորմոքը, թախիծը, որը ոչ մի կերպ չի ընկալում երևակայությունդ: Աուրայի ննջասենյակին տեր դարձած՝ քնում ես միայնության մեջ, հեռու այն մարմնից, որին թվում էր, թե տիրել ես:

Արթնանալով ինչ-որ մեկին ես փնտրում սենյակում և գիտես, որ այդ ինչ-որ մեկն Աուրան չէ, նա չէ քեզ անհանգստացնողը, այլ անցյալ գիշեր ծնունդ առած ինչ-որ բանի կրկնակի գոյությունը: Ձեռքերդ տանում ես քունքերիդ՝ փորձելով հանդարտեցնել հոգուդ խռովքը: Տեղի տված թախիծը ենթագիտակցությանդ անշոշափելի խորքերից քեզ կամացուկ հուշում է, որ քո մյուս կեսին ես փնտրում,

որ նախորդ գիշերվա անպտուղ հղացումը քո սեփական կրկնակին է ծնել:

Այլևս չես մտածում, քանզի կան բաներ, որ շատ ավելի զորեղ են, քան երևակայությունը, զորօրինակ՝ սովորույթը, որ քեզ ստիպում է վեր կենալ տեղից և հարակից լոգասենյակ փնտրել և չգտնելով՝ աչքերդ տրորելով դուրս գալ սենյակից, բերանիդ մեջ դառնահամ զգալով երկրորդ հարկ ելնել, մազակալած այտերդ շփելով քո սենյակ մտնել, լոգարանի ծորակը բացել և գոլ ջրի մեջ ընկղմվել, թուլանալ, այլևս չմտածել:

Եվ սրբվելու պահին հանկարծ կհիշես պառավին ու աղջկան, որ իրար գրկած ժպտում էին քեզ: Միասին դուրս գալուց առաջ, այո, գրկել էին իրար: Մտովի վերհիշում ես, որ նրանք միշտ էլ, երբ միասին են, ճիշտ և ճիշտ նույն բանն են անում՝ գրկում են իրար, ժպտում, ուտում, խոսում, մտնումելնում միաժամանակ, կարծես մեկը մյուսին նմանակելիս լինի, կարծես մեկի գոյությունը

մյուսի կամքից կախված լինի: Սափրվելու ընթացքում այս մտքերով տարված՝ թեթևակի կտրում ես այտդ: Լարում ես ուժերդ, որ հավաքես քեզ:

Հարդարվելուց հետո սկսում ես հաշվել դեղարկղիկիդ միջի իրերը՝ սրվակներն ու պարկուճները, որ հյուրատան քո սենյակից սպասավորն է բերել, որին այդպես էլ չես տեսել: Քթիդ տակ արտասանում ես դեղերի անունները, շուռումուռ ես տալիս, կարդում օգտագործման ցուցումները և բաղադրությունը, գործարանային մակնիշն ես արտասանում: Կառչել ես այդ առարկաներից, որպեսզի մոռանաս այն մյուս բանի՝ այն անանուն, անմակնիշ, խելամիտ բաղադրություն չունեցող բանի մասին: Ի՞նչ է ակնկալում քեզնից Աուրան,- վերջում հարց ես տալիս ինքդ քեզ՝ շրխկոցով փակելով դեղարկղիկը:- Ուզածն ի՞նչ է:

Քեզ արձագանքում է միջանցքի երկայնքով անցնող զանգի խուլ ղողանջը՝ ազդարարելով,

որ նախաճաշը պատրաստ է արդեն: Շապկանց դեպի դուռն ես դիմում և բացելով այն՝ Աուրային ես տեսնում քո դիմաց: Աուրան է հաստատ, որովհետև որքան էլ կանաչավուն քողը թաքցնում է դեմքը, հագինը մշտական կանաչ կերպասն է: Բռնում ես կնոջ բարակ, դողդողացող դաստակից...

– Նախաճաշը պատրաստ է,– ասում է շատ ավելի ցածրաձայն, քան երբևէ...

– Աուրա, վերջ տուր այս խաբեությանը:

– Խաբեությա՞նը:

– Ասա ինձ, սենյորա Կոնսուելոն է քեզ արգելում դուրս գալ, կյանքդ դասավորել, չէ՞: Ինչո՞ւ պետք է նա ներկա լինի, երբ ես ու դու... Ասա, որ կգաս ինձ հետ, հենց որ...

– Քեզ հե՞տ: Բայց ո՞ւր:

– Դուրս, լույս աշխարհ: Միասին ապրելու: Դու չես կարող առհավետ շղթայված մնալ մորաքրոջդ... Հանուն ինչի՞ է այդ նվիրվածությունը: Ի՞նչ է, այդքան շա՞տ ես սիրում նրան:

– Սիրո՞ւմ...

– Այո, հենց սիրում, ուրիշ ինչի՞ համար պետք է քեզ այդպես զոհաբերես:

– Սիրո՞ւմ: Այդ նա է ինձ սիրում: Նա է հանուն ինձ իրեն զոհաբերում:

– Բայց նա ծեր կին է, մի ոտքը գերեզմանում, դու չես կարող...

– Նա ինձնից երկար կապրի: Ճիշտ է, ծեր է, զզվելի... Ֆելիպե, ես չեմ ուզում... չեմ ուզում նրա նման լինել... ուրիշ լինել...

– Նա ողջ-ողջ թաղում է քեզ: Բայց դու պետք է վերածնվես, Աուրա...

– Վերածնվելուց առաջ նախ պետք է մեռնել: Ո՛չ, դու չես հասկանում: Մոռացիր ամեն ինչ, Ֆելիպե, վստահիր ինձ:

– Եթե բացատրես...

– Վստահիր ինձ: Նա այսօր դուրս է գալու ամբողջ օրը...

– Նա՞:

– Այո, նա, ուրիշ էլ ո՞վ:

– Դուրս է գալո՞ւ: Բայց նա երբեք...

– Դե չէ, երբեմն դուրս է գալիս: Ողջ ուժերը հավաքում է և դուրս գալիս: Այսօր էլ, ահա, դուրս է գալու: Ամբողջ օրը... Ես ու դու կարող ենք...

– Գնա՞լ այստեղից:

– Եթե ուզում ես...

– Ոչ, թերևս ոչ հիմա: Ես աշխատանքային պայմանագիր ունեմ: Երբ որ աշխատանքս ավարտեմ, ա՛յ, այդ ժամանակ...

– Հա՛, դե լավ: Նա ամբողջ օրը չի լինելու: Մենք կարող ենք մի բան անել...

– Ի՞նչ:

– Այս երեկո կսպասեմ քեզ մորաքրոջս սենյակում: Կսպասեմ, ինչպես միշտ:

Նա կշրջվի և կհեռանա՝ զանգը զնգզնգացնելով այն բորոտների հանգույն, որոնք անուշադիրներին զանգով են տեղեկացնում իրենց մոտենալու մասին. «Հեռո՛ւ, հեռո՛ւ ինձնից»: Հագնում ես վերնաշապիկդ ու պիջակդ, հետևում զանգի ընդմիջվող ծնգծնգոցին, որ առջևից ճաշասրահ է առաջնորդում քեզ:

Սրահ մտնելուն պես ծնգծնգոցը դադարում է, և կորացած, կոշտուկավոր ձեռնափայտին հենված՝ գեներալ Լյորենտեի փոքրամարմին, խորշոմած, ճերմակ շրջազգեստ հագած, քրքրված սև քողը երեսին գցած այրին է հայտնվում ճաշասրահից և քո կողմն ուղղվում: Հայացքի չարժանացնելով՝ անցնում է կողքովդ, թաշկինակի մեջ շարունակ խխելով ու թքելով՝ մռթմռթում է քթի տակ.

– Այսօր տանը չեմ լինելու, սենյոր Մոնտերո: Հույսս ձեր աշխատանքի վրա է: Շտապեք: Ամուսնուս հուշերն անպայման պետք է հրապարակվեն:

Եվ կհեռանա՝ գորգերի վրա հնաոճ տիկնիկի նման մանրիկ քայլեր գցելով, ձեռնափայտին հենված, թքելով ու փոշտալով, կարծես շնչուղիներից ու խցանված թոքերից ինչ-որ բան ուզենա արտավիժել: Քո մեջ կամք ես գտնում, որպեսզի նրա ետևից չշրջվես, մի կերպ զսպում ես քեզ, որպեսզի հին սնդուկի

խորքերից հանած դեղնած հարսանեկան զգեստին չնայես...

Ճաշասրահում հազիվ մի քանի կում ես անում սառած սև սուրճից: Մի ամբողջ ժամ նստած ես մնում հնամաշ բարձր ու սրածայր թիկնակով աթոռին՝ ծխելով ու ականջ դնելով ամեն մի շշուկի, մինչև որ համոզվում ես, որ պառավը դուրս է եկել տնից և հանկարծակիի չի բերի քեզ: Եվ քանի որ մեկ ժամ շարունակ ափիդ մեջ սեղմած ես պահել սնդուկի բանալին, հիմա անաղմուկ դեպի սրահ ես ուղղվում: Նախասրահում սպասում ես ևս տասնհինգ րոպե,- ժամացույցդ է այդ մասին հուշում,- ականջդ դռնյա Կոնսուելոյի դռանը հպած, ապա թեթևակի հրում ես այն և մեհենական լույսերի շղարշի ետևում դատարկ, չհարդարված անկողինն ես նշմարում, որի վրա ճագարն իր գազարն է կրծում: Տնտղում ես մշտապես փշուրներով լցված անկողինը, կարծես պստլիկ պառավը վերմակների ծալքերում կարող է թաքնված լինել:

Անկյունում տեղավորված սնդուկի կողմն ես ուղղվում: Մկներից մեկի պոչն ես տրորում, որ ծվծվալով փախչում է ներբանիդ տակից, վազում է մյուսներին լուր տալու վտանգի մասին, իսկ ձեռքդ պղնձե բանալին է մոտեցնում ծանր, ժանգոտ փականքին, որ ճռնչում է բանալին մտցնելու պահին: Հանում ես կողպեքը, ծխնիների ճռնչոցին ականջ դնելով՝ դանդաղ ետ ես գցում սնդուկի կափարիչը և հանում հուշերի երրորդ՝ կարմիր ժապավենով կապված տրցակը: Վերցնելու պահին տրցակի տակ մի քանի հին, խավաքարտե, եզրերը մաշված լուսանկար ես նկատում, առանց նայելու դրանք էլ ես վերցնում: Այդ ամբողջ գանձը կրծքիդ սեղմած՝ ճողոպրում ես ծածուկ և սոված մկներին մտահան արած՝ նույնիսկ սնդուկը չես փակում, որպեսզի վայրկյան առաջ հատես շեմը, ետևիցդ փակես դուռը, Նախասրահի պատին հենվելով շունչդ տեղը բերես և քո սենյակը ելնես:

Այնտեղ կկարդաս նոր գրառումներ՝ շարու նակությունը, հոգեվարք ապրող դարաշրջանի անցքերը: Գեներալ Լյորենտեն իր ողջ պերճա խոսությունն է գործի դնում Էժենիա դե Մոնտիխոյի[1] անհատականության մասին խոսելիս, իր խորին հարգանքն է արտահայտում Նապոլեոն Կրտսերի[2] հանդեպ, իր ամենաուժգնատենչ հռետորաբանությունն է ասպարեզ հանում ֆրանս-պրուսական պատերազմի սկիզբն ազդարարելիս և էջերը խորին կսկիծով լցնում ջախջախման առիթով, արժանապատիվ մարդկանց հանրապետական հրեշին տապալելու բոցաշունչ կոչեր է անում, գեներալ Բուլանժեի[3] մեջ է հույսի շող տեսնում,

---

[1] Էժենիա (Էժենի) դե Մոնտիխո (1826-1920) իսպանական ծագում ունեցող Ֆրանսիայի վերջին կայսրուհի, Նապոլեոն III-ի կինը:

[2] Նապոլեոն Կրտսերը նույն ինքը Նապոլեոն III-ն է:

[3] Ժորժ Էթիենտ Ժան Մարի Բուլանժե (1837-1891) ֆրանսիացի գեներալ, քաղաքական գործիչ, բուլանժիզմ անվամբ հայտնի ռևանշիստական հակահանրապետական շարժման առաջնորդ:

տառապում Մեքսիկայի կարոտից, զգում, որ Դրեյֆուսի[1] գործում բանակի պատիվը,– միշտ այդ պատիվը,– կրկին բարձրացել է... Դեղնած թերթերը փշրվում են մատներիդ հպումից, իսկ դու արդեն ուշադրություն չես դարձնում, քանզի միայն կանաչ աչքերով կնոջն ես փնտրում. «Ես գիտեմ, թե ինչու ես հաճախ լաց լինում,

---

[1] Ալֆրեդ Դրեյֆուս (1859-1935) – հրեական ծագում ունեցող ֆրանսիական բանակի սպա, մեծ աղմուկ հանած «Դրեյֆուսի գործ» անվամբ հայտնի դատավարության հերոս, որը Ֆրանսիային հասցրել է քաղաքացիական պատերազմի շեմին և հասարակական մեծ փոփոխությունների պատճառ դարձել: 1894թ. Դրեյֆուսը, ըստ կեղծ փաստաթղթերի, մեղադրվել է լրտեսության և դավաճանության մեջ՝ իբր Գերմանիայի կցորդին գաղտնի փաստաթղթեր հանձնելու համար, և դատապարտվել ցմահ բանտարկության, ապա պատիժը մեղմացվել է ցմահ աքսորի: 1899թ. գործը վերանայվել է և Դրեյֆուսին ներում է շնորհվել, իսկ 1906թ. նա վերջնականապես արդարացվել է, մայորի կոչումով վերականգնվել ծառայության մեջ: Հետագայում մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին, հասել փոխգնդապետի աստիճանի և պարգևատրվել «Պատվո լեգեոն» շքանշանով:

Կոնսուելո: Ես չկարողացա քեզ զավակ պարգևել, քեզ, որ կյանք ես ծառագում...»: Այնուհետև. «Կոնսուելո, Աստծուն մի փորձիր: Մենք պետք է համակերպվենք: Մի՞թե քեզ քիչ է իմ սերը: Ես գիտեմ, որ դու էլ ինձ ես սիրում, ես դա զգում եմ: Ես քեզ չեմ խնդրում համաձայնել ինձ հետ, քանզի դա վիրավորական կլիներ քեզ համար: Խնդրում եմ միայն, որ այն մեծ սիրո մեջ, որ քո ասելով բավական է քեզ, տեսնես այն ամենը, ինչ կարող է լցնել երկուսիս էլ՝ առանց հիվանդագին երևակայությանը դիմելու...»: Մեկ այլ էջում. «Կոնսուելոյին փորձեցի համոզել, որ այդ հմայախոտերից ոչ մի օգուտ չկա: Իսկ նա համառորեն շարունակում է իր բույսերն աճեցնել պարտեզում: Ասում է, որ ինքն իրեն չի խաբում, որ խոտերը, ճիշտ է, իր մարմինն արգասաբեր չեն դարձնում, բայց հոգին են փառավորում...»: Ավելի ներքևում. «Նրան բարձը գրկած զառանցելիս գտա: Բղավում էր. «Այո՛, այո՛, այո՛, ես կարողացա՛, ես մարմնավորեցի

Նրան, ես կարող եմ կանչել նրան, կարող եմ կյանք տալ իմ կյանքով»: Ստիպված էի բժիշկ կանչել: Բժիշկն ասաց, որ չի կարող հանգստացնել նրան, որովհետև նա թմրանյութերի ազդեցության տակ է, ոչ թե խթանիչների...»: Եվ վերջում. «Այսօր լուսաբացին նրան մենամենակ, միջանցքում ոտաբոբիկ քայլելիս գտա: Փորձեցի կանգնեցնել, բայց նա անցավ առանց ինձ նայելու, սակայն խոսքերն ինձ էին ուղղված: «Չկանգնեցնես ինձ,– ասաց,– ես դեպի իմ երիտասարդությունն եմ գնում, և երիտասարդությունս էլ դեպի ինձ է գալիս: Արդեն ներս է մտնում, պարտեզում է արդեն, արդեն հասնում է»... Կոնսուելո, խե՜ղճ Կոնսուելո... Կոնսուե՛լո, սատանան էլ է սկզբում հրեշտակ եղել...»:

Վերջ: Այստեղ՝ «Consuelo, le démon aussi était un ange, avant...»[1], ավարտվում են գեներալ Լյորենտեի հուշերը:

---

[1] Կոնսուելո, սատանան էլ է սկզբում հրեշտակ եղել *(ֆր.)*:

Եվ վերջին էջի տակ լուսանկարներն են: Ահա զինվորական համազգեստով ծեր պարոնի դիմանկարը. հին լուսանկար է՝ անկյունում գրված Moulin, Photographe, 35 Boulevard Haussmann[1] և տարեթիվը՝ 1894: Ահա և Աուրայի լուսանկարը՝ կանաչ աչքերով, հավաքած թուխ խոպոպներով, դորիական մի սյան վրա հենված Աուրան՝ նկարված Հռենոսյան Լորելեյի[2] բնապատկերի խորապատկերին, նստաբարձիկավոր զգեստը մինչև օձիքն ամուր կոճկած, թաշկինակը ձեռքին: Ներքևում սպիտակ թանաքով գրված է՝ Աուրա, 1876թ., իսկ դարձերեսին՝ դագեռոտիպի ծալված ստվարաթղթի վրա, սարդոստայն հիշեցնող ձեռագրով գրված է Fait pour notre dixieme anniversaire de mariage[3], և

---

[1] Մուլեն, Լուսանկարիչ, Օսման ծառուղի 35 *(ֆր.)*:

[2] Լորելեյը Գուարսհաուզեն քաղաքի մերձակայքում, Հռենոսի արևելյան ափին գտնվող գեղատեսիլ ժայռ է, որի անվան հետ բազմաթիվ ռոմանտիկ լեգենդներ են կապված:

[3] Մեր ամուսնության տասներորդ տարեդարձի առիթով *(ֆր.)*:

նույն ձեռագրով՝ Կոնսուելո Լյորենտե: Երրորդ լուսանկարում Աուրան արդեն քաղաքացիական հագնված նույն տարեց տղամարդու հետ է, երկուսով նստած են այգու նստարանին: Լուսանկարը փոքր ինչ խունացել է. Աուրան այնքան էլ երիտասարդ չի երևում, որքան առաջին լուսանկարում, բայց սա ինքն է, այս մյուսը՝ նա, այս մյուսը... դու:

Աչքերիդ ես մոտեցնում լուսանկարները, լույսին ես պահում, ձեռքով ծածկում ես գենեռալ Լյորենտեի ալեհեր մորուքը, նրան սևահեր ես պատկերացնում և ամեն անգամ խունացած, ջնջված, մոռացված, բայց քեզ ես տեսնում, քե՛զ, քե՛զ, քե՛զ:

Գլուխդ պտտվում է՝ հեղեղված այն հեռավոր վալսի ռիթմերով, որ խառնվում է հայացքիդ, շոշափելիքիդ, խոնավ ու բուրումնավետ բույսերի հոտին: Ուժասպառ ընկնում ես մահճակալին, շոշափում ես այտոսկրերդ, աչքերդ, քիթդ, ասես վախենում ես, թե անտես մի ձեռք խլել է դիմակդ, որ կրում էիր քսանյոթ

տարի շարունակ, ռետինե և խավաքարտե այդ դիմագծերը, որ քառորդ դար թաքցրել են իրական դեմքդ, քո վաղեմի դեմքը, քո նախկին, մոռացված դեմքը: Գլուխդ թաղում ես բարձի մեջ՝ աշխատելով թույլ չտալ, որ քամին պոկի այն դիմագծերը, որ քոնն են, որ ուզում ես քեզ պահել: Մնում ես դեմքդ բարձի մեջ թաղած, աչքերդ բարձի ետևում լայն բացած՝ սպասելով մի անխուսափելի բանի, որի առաջը չես կարող առնել: Այլևս ժամացույցիդ՝ այդ անպետք առարկային չես նայելու, որ մարդկային սնապարծության հետ համաձայնության եկած՝ սխալ է հաշվում ժամանակը, այդ սլաքներին, որ ծույլ-ծույլ ցույց են տալիս հորինովի երկար ու ձիգ ժամերը, որպեսզի խաբս տան իրական ժամանակին, որ թռչում է կատաղի, մահացու արագությամբ, որ ոչ մի ժամացույց ի զորու չէ չափել: Կյանք, դար, հիսուն տարի. հետայսու դու չես կարողանալու պատկերացնել այդ կեղծ չափումները, չես կարողանալու ձեռքդ վերցնել անմարմին այդ փոշին:

Երբ գլուխդ վերցնես բարձի վրայից, սենյակը խավարի մեջ սուզված կգտնես: Մութն ընկած կլինի արդեն:

Մութն ընկած կլինի արդեն: Առաստաղի ապակիների ետևում կսահեն սև, արագահոս ամպերը, որ ծվեն-ծվեն են անում լուսնի փայլատ լույսը, որը համառորեն ջանում է գոլորշիացնել նրանց և իր դալուկ, կլորիկ, ժպտուն դեմքն ի տես հանել: Մի պահ դուրս կգա նա, մինչև որ մութ մի ամպիկ նորից բարուրի նրան:

Դու է՛լ չես սպասի: Ժամացույցիդ արդեն չես նայի: Արագ կիջնես աստիճաններով, որոնք քեզ հեռացնում են այդ խցից, որտեղ ցիրուցան թափված խունացած թղթերը, գունաթափ դագեռոտիպերը կմնան: Կհասնես միջանցք, կանգ կառնես սենյորա Կոնսուելոյի դռան առաջ, կլսես խուլ, երկարատև լռությունից խռպոտած սեփական ձայնդ.

– Ա՛ուրա...

Կկրկնես.

– Ա՛ուրա...

Եվ սենյակ կմտնես: Մոմերի լույսն արդեն մարած կլինի: Կմտաբերես, որ պառավն ամբողջ օրը տանը չի եղել, և առանց այդ բարեպաշտ կնոջ հոգածության մոմերը հալվել-սպառվել են: Մթության մեջ առաջ կշարժվես մահճակալի ուղղությամբ: Նորից ձայն կտաս.

– Ա՛ուրա...

Ականջ կդնես վերմակների վրայից եկող կերպասի թեթև շրշյունին, քո շնչառությանն ուղեկցող մեկ ուրիշի շնչառությանը: Ձեռքդ կմեկնես, որպեսզի Աուրայի կանաչ խալաթը շոշափես և նրա ձայնը կլսես.

– Օ՛, ոչ... Ձեռք մի տուր ինձ... Պառկիր կողքիս...

Մահճակալի ծայրը կշոշափես, ոտքերդ կբարձրացնես և կիսապառկած կմնաս անշարժ: Ձես կարողանա դողդ զսպել.

– Նա ցանկացած պահի կարող է վերադառնալ...

– Նա այլևս չի վերադառնա:

– Երբե՞ք:

– Ես ուժասպառ եմ: Նա էլ է արդեն ուժասպառ: Երբեք երեք ամսից ավել չեմ կարողացել նրան ինձ մոտ պահել:

– Աուրա...

Կփորձես ձեռքդ Աուրայի ստինքներին տանել: Նա մեջքը քեզ կդարձնի. դու նրա ձայնի հեռավորությունից կհասկանաս դա:

– Ոչ... Ինձ ձեռք մի տուր...

– Աուրա... ես սիրում եմ քեզ:

– Այո, գիտեմ, որ սիրում ես: Միշտ սիրելու ես, երեկ ես ասել...

– Միշտ սիրելու եմ քեզ: Առանց քո համբույրների, առանց քո մարմնի չեմ կարող ապրել:

– Համբուրիր դեմքս, միայն դեմքս:

Շուրթերդ կմոտեցնես քո գլխի մոտ հանգչող գլխին, նորից կշոյես Աուրայի երկար վարսերը, կոպտորեն կբռնես փխրուն կնոջ ուսերը՝ ուշադրություն չդարձնելով նրա

գանգատներին, կերպասե խալաթը կպոկես վրայից, գիրկդ կառնես նրան, կզգաս մերկ, փոքրիկ, գրկիդ մեջ թաղված անզոր մարմինը, ուշադրություն չես դարձնի նրա տնքոցներին ու դիմադրությանը, անօգնական հեծկլտոցին, կհամբուրես դեմքը առանց մտածելու, առանց որևէ բան տարբերելու: Եվ երբ ձեռքդ լխկած ստինքներին դիպչի, մեղմ լույս կթափանցի և հանկարծակիի կբերի քեզ, կստիպի դեմքդ շրջել, որոնել պատի այն ճեղքը, որտեղից լուսնի շողն է ընկնում՝ մկների բացած այդ անցքը, պատի այդ ծակը, որի միջով արծաթագույն լույսը քամոցվում և ընկնում է Աուրայի ճերմակ մազերի, սոխի կճեպի նման շերտատված, գունատ, սալորաչրի նման սմքած ու ճլորած դեմքի վրա: Կհեռացնես շուրթերդ թոշնած շուրթերից, որ հենց նոր էիր համբուրում, աչքիդ առաջ բացվող անատամ լնդերից և լուսնի լույսի ներքո կտեսնես պառավ սենյորա Կոնսուելոյի մերկ մարմինը՝ վտիտ, ծվատված, փոքրիկ ու

խարխուլ, թեթևակի դողով բռնված, որովհետև դու հպվում ես այդ մարմնին, գուրգուրում ես այն, որովհետև դու էլ ես վերադարձել...

Գլուխդ, բաց աչքերդ կթաղես Կոնսուելոյի արծաթե մազերի մեջ, այն կնոջ, որ նորից կգրկի քեզ, երբ լուսինը սահի, ամպերով ծածկվի, թաքցնի երկուսիդ էլ և իր հետ ժամանակավորապես երկինք տանի երիտասարդության հուշը՝ միս ու արյուն դարձած հուշը:

– Նա կվերադառնա, Ֆելիպե, մենք միասին ետ կբերենք նրան: Թող ուժերս վերականգնեմ, և ես ետ կբերեմ նրան: